

DOI: 10.59560/18291155-2025.4-38



**ՆԱԶԵԼԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ**

ՀՊՏՀ «Հասարակագիտության»  
ամբիոնի վարիչի  
ժամանակավոր պաշտոնակատար,  
իրավաբանական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր



**ԳԱՌՆԻԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ**

ՀՊՏՀ «Հասարակագիտության»  
ամբիոնի դոցենտ,  
իրավաբանական գիտությունների թեկնածու,  
արդարադատության առաջին  
դասի խորհրդական

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԿՈՒՄ 4(121)2025

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻՆ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ  
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՎԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

**Ամփոփագիր**

Իրավաբանական պատասխանատվության հիմնախնդիրները այսօր էլ շարունակում են մնալ իրավաբան գիտնականների ուշադրության կենտրոնում:

Հասարակական հարաբերությունների ժամանակակից զարգացումները օրվա հրամայական են դարձնում իրավունքի ճյուղային պատասխանատվության հետազոտման և գիտական մշակման անհրաժեշտությունը, որի նպատակը ըստ հասարակական հարաբերությունների ծագման ոլորտների տեղ գտած իրավախախտումների կարգավորումն է:

Պետության պատժողական քաղաքականության համակարգի տարբեր ոլորտներում տեղ գտած իրավախախտումների, պետական հարկադրանքի, պատասխանատվության և պատժի հիմնախնդիրների բացահայտումներին են նվիրված հեղինակների գիտական հետազոտությունները, որի մեթոդաբանական աղբյուրը իրավագիտության ոլորտում ժամանակի ընթացքում մշակված մասնավոր և հանրային իրավունքի ճյուղերի ընդհանուր իրավաբանական պատասխանատվության հայեցակարգային դրույթներն են, որոնց իրավահամեմատական հետազոտությունները հնարավորություն են ընձեռում իրավաբանական ավանդական պատասխանատվության տեսակներից սահմանազատել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը՝ ըստ այն առանձնահատկություն-

ների, որոնց իրավական կարգավորումներն ուղղված են ժամանակի արտադրատնտեսական հարաբերությունների սուբյեկտների գործունեության որակների գնահատմանը:

Հեղինակները իրավաբանական պատասխանատվությանը նվիրված իրավաբանական գրականության վերլուծությունների հիման վրա հանգում են այն եզրակացության, որ իրավաբանական անձի պատասխանատվությունը իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է, որի սահմանազատման հիմնական առանձնահատկությունները բացառապես պայմանավորված են պետության արտադրատնտեսական, նյութական բարիքների արտադրության ոլորտում դրամական միջոցների հավաքման, բաշխման և վերաբաշխման գործընթացներում տեղ գտած քրեաիրավական խախտումների բացահայտման և դրանց՝ ըստ պետության ֆինանսական գործունեության առանձին ոլորտների դասակարգման հետ:

Հոդվածի հեղինակները, ելնելով իրավաբանական պատասխանատվության արդյունավետության սկզբունքներից, հարազատ մնալով իրավաբանական պատասխանատվության մեթոդաբանական հնարքներին, ընդգծում են, որ ի տարբերություն քրեական, վարչական, կարգապահական պատասխանատվության տեսակների, քանի որ ֆինանսաիրավական պատասխանատվությունն արտահայտվում է ֆինանսաիրավական նորմի սանկցիայում, այն ըստ էության իրավահարաբերություն է, որի պաշտպանությունը սահմանված է օրենքով, իսկ խախտման դեպքում վրա է հասնում պետական հարկադրանքը՝ ֆինանսաիրավական ներգործության ձևերով:

Հոդվածում զարգացվում է այն միտքը, որ իրավաբանական անձի պատասխանատվության իրավական հիմքը ֆինանսական իրավախախտումն է, որն արտահայտում է իրավախախտման հետևանքով վնասված ֆինանսական պարտավորության հանրային-իրավական բնույթը, հնարավորություն ընձեռելով ֆինանսաիրավական պատասխանատվությունը սահմանազատել իրավական պատասխանատվության մյուս ձևերից և ճանաչել իրավաբանական անձի ֆինանսաիրավական պատասխանատվության գործնական կիրառման առավելությունները՝ որպես վերջինիս ինքնուրույն գոյության փաստ:

Առաջնորդվելով ֆինանսաիրավական պատասխանատվության առանձնահատկություններով՝ հոդվածում հիմնավորված է, որ պատասխանատվության այս տեսակն ունի պետությանը հասցված վնասի բացառապես ամբողջական վերականգնողական բնույթ:

Հեղինակները ֆինանսական պատասխանատվության ձևավորման մեթոդաբանության առանձնահատկություններով վերլուծում են իրավաբանական անձին որպես հիշյալ պատասխանատվության սուբյեկտի, իրավախախտումների տեսակները և իրավական հիմնավորումներով ընդգծում են ֆինանսաիրավական պատասխանատվության ինքնուրույն գործածման և կիրառման անհրաժեշտությունը՝ որպես ՀՀ-ում իրականացվող տնտեսական, ֆինանսական, հարկային, արժույթային բարեփոխումների իրավական երաշխիք:

**Հիմնաբառեր.** հարկադրանք, պատասխանատվություն, իրավաբանական

պատասխանատվություն, տուգանք, տույժ, վերականգնողական վարույթ, պատժատեսակ, պատժամիջոց:

Պետական «հարկադրանք» եզրույթի խնդիրների, նպատակների, ինչպես նաև գործառույթների ձևավորման գործընթացի ուսումնասիրություններն ունեն ոչ միայն ճանաչողական, կիրառական, այլև ժամանակի իրավական քաղաքականության գործադրման հետևանքներն արժևորելու բնույթ: Այն լայն առումով հանդես է գալիս որպես արդարադատության և օրենսդրության պահպանմանն ուղղված միջոցառումների ամբողջություն պետական իշխանության բոլոր մակարդակներում:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ամենօրյա գործունեության ապահովման գործընթացում պետական հարկադրանքը նպաստում է ինչպես պետական, այնպես էլ տնտեսական բոլոր մարմինների բազմաբնույթ գործառնությունների իրականացման օրինականությանը: Անհրաժեշտության դեպքում կանխվում և վերականգնվում են իրավահարաբերությունների մասնակիցների օրինական շահերի և իրավունքների խախտումները, ցույց են տրվում թերություններն ու բացթողումները շտկելու ուղիները:

**Այսօր, պետական հարկադրանքի առանձին տեսակների կիրառման սահմանափակումներին զուգընթաց և հասարակական կյանքի պահանջներին համահունչ, կարող են ընդլայնվել, երևան գալ պետական հարկադրանքի նոր տեսակներ: Դրանց ծնունդը օբյեկտիվ անհրաժեշտություն է և կապված է արտադրատնտեսական հարաբերությունների զարգացման և իրավական նորակների ձեռքբերման հետ:**

Շուկայական տնտեսության նոր հարաբերությունները, պետության և իրավունքի՝ որպես հասարակական հարաբերությունների կարգավորիչի նոր որակը, ցանկացած պետության ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և օրինական շահերի անձեռնմխելիության ապահովումն է, որոնք այսօր հրամայաբար պահանջում են հատուկ ուշադրություն դարձնել պետական հարկադրանքի տեսակների համակարգում իր տեղն ամրապնդող հարկադրանքի նոր տեսակների, դրանց իրավական առանձնահատկությունների, կիրառման հիմքերի, ինչպես նաև հարկադրանքի իրացումն ապահովող վարույթի հիմնահարցերի իրավական մշակմանը:

«Հարկադրանք» հասկացության գիտական ապարատը խիստ ընդարձակ է: Իրավագետները, օրինակ, հարկադրանքը ըստ օբյեկտի ներգործության դասակարգում են՝

- ա. հոգեբանական,
- բ. նյութական,
- գ. կազմակերպական,
- դ. ֆիզիկական բնույթի<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս *Емельянов А.С. Меры финансово-правового принуждения. - М., 2009: Попов Л. Убеждение и принуждение // Московский рабочий, 1968, էջ 22-25:*

Հարկադրանքն իրավագիտության ուսումնասիրության առարկա է այնքանով, որքանով այն հանդես է գալիս որպես պետության գործունեության մեթոդ: Հիմնավոր է իրավագետներից Դ.Ն. Բախրախի այն պնդումը, որ իրավագիտությունը ոչ թե զբաղվում է հարկադրանքի հարցերով ընդհանրապես, այլ միայն այնքանով, որքանով հարկադրանքը՝ որպես հասցեագրում, հստակորեն արտահայտված է իրավական նորմում<sup>2</sup>:

Հետևաբար, մեր իրավագիտական հետազոտման առարկան պետական հարկադրանքն է, որը կիրառվում է իրավական նորմերով սահմանված կարգով, այն դեպքերում, երբ խախտվում են նորմի պահանջները:

Իրավագետները, ժամանակին անդրադառնալով պետական հարկադրանքի իրավական առանձնահատկությունների վերլուծություններին, միանգամայն սպառնիչ լուսաբանել են «պետական հարկադրանք» հասկացությունը, դրա առանձնահատկությունները, կիրառման հիմքերի հիմնահարցերը: Նշվել է, որ պետական հարկադրանքը խտացված է իրավունքի, դրա առանձին ճյուղերի նորմերի մեջ, որոնց կիրառման ընթացքում դրսևորվում է իր հատուկ առանձնահատկություններով՝ ձեռք բերելով պետական հարկադրանքի ուժ<sup>3</sup>:

Նկատենք, որ պետական-իրավական հարկադրանքի կառուցվածքը, կիրառման սահմանները, գործառույթները պայմանավորված են հասարակական պահանջի անհրաժեշտությամբ: Որպես կանոն իրավական հարկադրանքն ուղղված չէ մարդու կամ կազմակերպության դեմ և չի արտահայտում անհատի և հասարակության հակամարտությունը: Իրավական հարկադրանքի սահմանները սկսվում են այնտեղից, որտեղ անհատի կամ կազմակերպության շահերը համաձայնեցվում են համընդհանուր հասարակական շահի հետ՝ բացառելով անձնական եսասիրությունը և շահամոլությունը:

Իրավական հարկադրանքի **առաջին** առանձնահատկությունը պետք է համարել այն, որ վերջինիս կիրառման հիմքն իրավունքն է և, որպես իրավունքի հատկանիշ, գործնականում իրացվում է դրա հետ:

Իրավական հարկադրանքի **երկրորդ** առանձնահատկությունն այն է, որ հարկադրանքը կիրառվում է այն դեպքում, երբ առկա է հակաիրավական գործողություն և որի պարագայում պետական կամքը հակասության մեջ է մտնում իրավախախտում թույլ տված անձի անհատական կամքի դրսևորման հետ<sup>4</sup>:

Գործնականում առանց իրավախախտման հարկադրանք չի կարելի կիրառել, քանի որ իրավախախտման բնույթով են որոշվում հարկադրանքի սահմանները: Առանձին դեպքերում ինչպես քրեական, վարչական, աշխատանքային, այնպես էլ՝

<sup>2</sup> Տե՛ս **Бахрах Д.Н.** Административная ответственность граждан в СССР. - Свердловск: Изд-во Уральского университета, 1989, էջ 13: **Серегина В.В.** Государственное принуждение по советскому праву. - Воронеж: ВУ, 1991, էջ 44:

<sup>1</sup> Տե՛ս **Алексеев С.С.** Общая теория права. Том 1. - М., 1981, էջ 267:

<sup>2</sup> Տե՛ս **Бахрах Д.Н.** Административное право: Учебник для вузов. - М.: БЕК, 1997, էջ 257: **Դանիելյան Գ.**, Վարչական պարտախախտվություն (ուսումնական ձեռնարկ): «Լոյս» հրատ., 2002, էջ 27:

Ֆինանսական հարկային իրավունքի ճյուղերում հնարավոր է հարկադրանքի կիրառում **իրավախախտման բացակայության դեպքերում:**

Իրավական հարկադրանքի **երրորդ** առանձնահատկությունն այն է, որ **վերջինս անհատականացված է:** Այլ խոսքով՝ հարկադրանք կիրառվում է կոնկրետ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց նկատմամբ: Այս դեպքում հարկադրանքը հանդես է գալիս որպես իրավախախտողի նկատմամբ արտաքին ներգործության միջոց, որի շնորհիվ իրավական նորմով ամրագրված հասցեագրումների կատարումը դառնում է պարտադիր և որը բացառում է նոր իրավախախտումների հնարավորությունը: Սա նպատակ է հետապնդում աջակցել իրավախախտների դաստիարակման և վերադաստիարակման գործին:

Իրավական հարկադրանքի դրսևորման **չորրորդ** առանձնահատկությունը բնութագրվում է այն հանգամանքով, որ վերջինս, որպես կանոն, կյանքի է կոչվում միայն իրավակիրառ ակտով: Իրավական նորմերը՝ որպես վարքագծի համապարտադիր կանոններ, ընդամենը նախատեսում են հարկադրանք, որը գործնականում կարող է իրեն ցույց տալ միայն իրավունքի կիրառման ակտի միջոցով: Այլ խոսքով՝ հարկադրանքի կիրառման յուրաքանչյուր դեպք առաջին հերթին ուղեկցվում է անհատական իրավական ակտով:

Հասարակական կյանքի բոլոր բնագավառների իրավական կարգավորումը՝ որպես պետության իրավաստեղծ գործունեության արդյունք, խոսում է այն մասին, որ իրավական հարկադրանքի կիրառումը բացառապես պետության և նրա համապատասխան լիազորություններ ունեցող պետական մարմինների բացառիկ իրավասությունն է և կազմում է պետական մարմինների գործունեության տնօրինման առարկայի առանցքը:

Այս վերլուծությունների հիման վրա դժվար չէ նկատել, որ իրավական հարկադրանքը, որպես կանոն, սահմանվում և կիրառվում է հարկադրանքի կիրառման իրավասությամբ օժտված պետական մարմինների կողմից: Հենց սա էլ կարելի է համարել պետական հարկադրանքը բնութագրող **հինգերորդ** առանձնահատկությունը:

Վերջապես, պետական հարկադրանքը բնութագրող բոլոր առանձնահատկությունները, որոնք ակնհայտ են դառնում կիրառման ընթացքում, ենթադրում են օրինականության խստիվ պահպանում: Այս պատճառով էլ գործնական կյանքում հարկադրանքի կիրառումն ապահովվում է մի շարք իրավական երաշխիքներով: Հետևաբար, պետական հարկադրանքի **վեցերորդ** առանձնահատկությունը պետք է համարել օրինականության պահանջների խստիվ պահպանման անհրաժեշտությունը:

Պետական հարկադրանքի հիշատակված առանձնահատկությունների հիման վրա, ինչպես ժամանակին, այնպես էլ այսօր, իրավաբանական գրականության մեջ բազմաթիվ փորձեր են կատարվել սահմանելու «իրավական հարկադրանք» հասկացությունը:

Իրավաբանական գրականության էջերում տեղ գտած բոլոր սահմանումներն էլ, ըստ էության, ամփոփում են հարկադրանքի առանձնահատկությունների թվարկումը, ըստ որի կարելի է պնդել, որ **իրավական հարկադրանքը պետական**

**և տեղական ինքնակառավարման մարմինների հատուկ հարկադրանքի կիրառման լիազորությունների համալիր է, որն իրականացվում է օրենքի և այլ իրավական ակտերի հիման վրա իրավախախտում թույլ տված անձանց նկատմամբ՝ իրավունքի կիրառման ակտեր կայացնելու միջոցով:**

Պետական հարկադրանքի կիրառման առանձին ոլորտների ընդլայնումը երբեմն պայմանավորված է հասարակության տնտեսական զարգացման օբյեկտիվ անհրաժեշտություն համարվող այնպիսի գործունեության ձևերի հետ, ինչպիսիք են՝ արտադրատնտեսական, ֆինանսավարկային հարաբերությունները: Դրանց իրավական կարգավորումը, հետևաբար նաև ըստ անհրաժեշտության ֆինանսական հարկադրանքի և պատասխանատվության կիրառումը բխում են հասարակության տնտեսական, ֆինանսական անվտանգության և պետության ֆինանսական ինքնիշխանության ապահովման նպատակներից:

Ժամանակակից աշխարհի բոլոր պետությունների ֆինանսների և վարկային հարաբերությունների, ինչպես նաև ֆինանսավարկային համակարգի առկայությունը պայմանավորված է ամենից առաջ փողի հանրային ֆինանսների գոյությամբ, որի տնտեսական հիմքն են կազմում ապրանքային արտադրությունը և արժեքի օրենքը:

Միասեռ ու միատեսակ ուղղվածության դրամական հարաբերությունները կարգավորվում են ֆինանսական իրավունքի և դրա ենթաճյուղերի՝ հարկային, բյուջետային, բանկային իրավական նորմերի միջոցով: Դրանք, առանձին-առանձին վերցրած, ունեն իրավական կարգավորման յուրահատկություններ և որոշակիորեն տարբերվում են միմյանցից:

Պետության ֆինանսական գործունեության աշխարհագրությունը խիստ ընդարձակ է, այն ընդգրկում է հասարակական կեցության բոլոր ոլորտները, որոնք կյանքի են կոչվում և կենսագործվում են ֆինանսական համակարգի առանձին իրավական ինստիտուտների միջոցով:

Իրավաբանական պատասխանատվության որևէ տեսակ կիրառելիս, պետության ֆինանսական համակարգը բնութագրելիս, կարծում ենք, այն պետք է վերլուծել որպես ֆինանսաիրավական բնույթի այնպիսի հասարակական հարաբերությունների ամբողջություն, որոնք ծագում են պետության դրամական միջոցների հավաքման, բաշխման և վերաբաշխման գործընթացում:

Այդպիսի հարցադրմամբ պետության ֆինանսական գործունեության տիրույթների մեջ են մտնում այսօր առանձին օրենքներով կարգավորվող ֆինանսական գործունեության այնպիսի ոլորտներ, որոնց մասնակիցները բացառապես իրավաբանական անձինք են. դրանք են՝ պետական բյուջեն, արտաբյուջետային սոցիալական հատուկ ֆոնդերը, պետական և բանկային վարկը, արժեթղթերի շուկան, արժույթային գործունեությունը, պետական ապահովագրությունը, ֆինանսական միջնորդների ֆինանսները, կազմակերպությունների ֆինանսները, տնային տնտեսությունների ֆինանսները:

Կազմակերպությունների ֆինանսները, արժեթղթերի շուկան, ապահովագրական ֆոնդերը, ինչպես նաև բանկային վարկը ներկայացնում են

հանրապետության ապակենտրոնացված ֆինանսները, որոնք օգտագործվում են տնտեսության ներսում սոցիալական խնդիրների լուծման նպատակով:

Առաջադրված հիմնախնդրի բացահայտման նպատակներով բավարար համարելով պետության ֆինանսական համակարգի հիշարկված աշխարհագրությունը՝ հիշյալ ոլորտների պետական կառավարումը գործնականում շատ հաճախ առիթ է դառնում տնտեսական օրենսդրության խախտումների, որոնց դեմ պայքարի միակ արդյունավետ միջոցը պետական, իսկ ֆինանսական համակարգի ոլորտում՝ ֆինանսական հարկադրանքի մեթոդների կիրառումն է: Այլ խոսքով՝ ֆինանսական հարկադրանքի՝ որպես ֆինանսաիրավական ինստիտուտի, տնօրինման տիրույթը ֆինանսական համակարգն է:

Ֆինանսական հարկադրանքը պետական-իրավական հարկադրանքի տարատեսակներից մեկն է, որի գոյությունը հասարակական կյանքում երևան է եկել ապրանքադրամական հարաբերությունների ձևավորման պահից և ամենացայտուն կերպով այսօր արտահայտվում է համաշխարհային ֆինանսատնտեսական գործունեության ցանկացած ոլորտում:

Գործնականում իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերի բացարձակ մեծամասնությունն իրենց բնույթով ֆինանսական են, որոնք օբյեկտիվորեն հուշում են, որ տնտեսական իրավահարաբերություններում իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող պետական հարկադրանքի ամենարդյունավետ իրավական միջոցը ֆինանսական հարկադրանքի կիրառումն է:

Ուսումնասիրությունները վկայում են, որ ֆինանսական հարկադրանքին հատուկ են այն բոլոր առանձնահատկությունները, որոնցով բնութագրվում է իրավական հարկադրանքը: Իրավական հարկադրանքի հետ ունեցած ընդհանրություններից զատ, ֆինանսական հարկադրանքը կարելի է բնութագրել մի շարք այնպիսի իրավական առանձնահատկություններով, որոնք հայտնի չեն իրավունքի այլ ճյուղերին:

Պետության ֆինանսական գործունեության իրավախախտումները կարգավորելու նպատակով ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող ֆինանսական հարկադրանքը և դրա նշանակությունը ՀՀ-ում առաջին հերթին պայմանավորված է ժամանակակից աշխարհում ապրանքադրամական հարաբերությունների այն կարևորությամբ, որ վերջիններս ունեն նյութական բարիքների, դրամական ֆոնդերի, ինչպես նաև ֆինանսական ռեսուրսների կենտրոնացման և օգտագործման գործընթացում: Դրամական ֆոնդերի աննախադեպ աճը, ինչպես նաև դրանց վրա ազդող գործոնների համակարգը կյանքի են կոչում պետական հարկադրանքի (իրավական) նորանոր տեսակներ, որոնց համակարգում իրավական առանձնահատկություններով կարելի է սահմանազատել ֆինանսական հարկադրանքը (պատասխանատվությունը):

Ֆինանսական հարկադրանքն ավանդական իրավական այնպիսի հարկադրանքի տեսակներից է, ինչպիսիք են քրեականը, վարչականը, կարգապահականը: Այս հարկադրանքը սահմանազատվում, առանձնացվում է

միայն իրեն հատուկ հասարակական այնպիսի իրավական յուրահատկություններով, ինչպիսիք են՝

1. ֆինանսաիրավական հարկադրանքի սուբյեկտները և օբյեկտները,

2. ֆինանսաիրավական հարկադրանքի միջոցները, որոնք կիրառվում են այն դեպքերում, երբ անհրաժեշտություն է առաջանում դրամական միջոցները տնօրինող սեփականատերերի, ինչպես նաև միավորված հատուկ դրամական ֆոնդերի անվանատերերի վարքագիծն ուղղորդել իրավական նորմերի պահանջների կատարմանը,

3. ֆինանսաիրավական հարկադրանքը կարող է կիրառվել անկախ իրավահարաբերության մասնակիցների կազմակերպական ենթակայությունից: Այլ խոսքով, ֆինանսական հարկադրանքը մեծամասամբ կիրառում է իշխանության լիազոր մարմինը, որն ըստ էության հարկադրանքի կիրառման եղանակներից մեկն է:

Որպես ֆինանսական հարկադրանքի կիրառման յուրահատկություն պետք է նկատել, որ վերջինս կարող է կիրառվել նաև կառավարողի և ենթակայի փոխհարաբերություններում, նույնիսկ եթե կողմերի միջև առկա է ինչպես կազմակերպչական, այնպես էլ՝ տնտեսական կախվածություն:

Ֆինանսական հարկադրանք կարող է կիրառվել նաև այն դեպքերում, երբ իրավահարաբերությունների մասնակիցների միջև բացակայում է իշխելու և ենթարկվելու ուղղակի կապը: Այլ խոսքով՝ ֆինանսական հարկադրանքի կիրառման առանձնահատկություններից մեկն այն է, որ վերջինիս ներգործության շրջանակները, բացի օրենքով սահմանված բացառությունների, որևէ սահմանով, ենթակայությամբ, վերադասության և ստորադասության շրջանակներով չեն սահմանափակվում, կիրառվում է ֆինանսական գործունեությանը մասնակցող ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձանց նկատմամբ:

4. Ֆինանսաիրավական հարկադրանքի կիրառմանը բնորոշ է ինչպես դատական, այնպես էլ՝ արտադատական կարգը,

5. ֆինանսաիրավական հարկադրանքի գործողության ոլորտները բացառապես կապված են պետության ֆինանսատնտեսական գործունեության խախտումների հետ և նպատակ ունեն տարատեսակ դրամական ֆոնդերը հավաքագրելու, բաշխման և օգտագործման գործընթացում ֆիզիկական և իրավաբանական անձանց թույլ տված ֆինանսական իրավախախտումների մասին նախազգուշացնելու, դրանք կանխելու և խափանելու: Հետևաբար, ֆինանսաիրավական հարկադրանքը հիմնականում կիրառվում է կազմակերպությունների (իրավաբանական) նկատմամբ, **քանի որ միայն դրանք են տիրապետում դրամական միջոցների համապատասխան ֆոնդերը:** Այս օրինաչափությունից բացառություններ են համարվում այն դեպքերը, երբ ֆինանսական գործունեությանը մասնակցում են քաղաքացիներ, որոնց գործունեությունն առնչվում է ֆինանսական պաշարների տեղաշարժերի հետ: Այս դեպքերում քաղաքացիների նկատմամբ ֆինանսաիրավական հարկադրանք կարող է կիրառվել, եթե հարկադրանքի օբյեկտ են համարվում այս կամ այն ոլորտի ֆինանսական պաշարների հավաքագրումը կամ օգտագործումը՝ օրինակ քաղա-

քացիներից գանձվող հարկերը՝ անշարժ գույքի (հողի հարկ, գույքի հարկ) եկամտային հարկ:

6. Ֆինանսաիրավական հարկադրանքի միջոցները, որպես կանոն, կարգավորվում են միայն ֆինանսաիրավական նորմերով, որոնց տեսակները, իրավական հիմքերը, ինչպես նաև կիրառման կարգը սպառիչ ամրագրված են պետությունների ֆինանսական գործունեությունը կարգավորող օրենսգրքերով և իրավական այլ ակտերով (օրինակ «Հարկային», «Բյուջետային»<sup>1</sup> օրենսգրքերը կամ ՀՀ «Արժույթային կարգավորման և վերահսկողության մասին» օրենք և այլն):

7. Ֆինանսաիրավական հարկադրանքի միջոցները նպատակաուղղված են ֆինանսական կարգապահության և օրինականության ապահովման խնդիրների լուծմանը: Դրանց նպատակը ֆինանսական օրենսդրությամբ ամրագրված բյուջետային, հարկային, վարկային, արժույթային, հաշվարկային և այլ բնույթի պարտավորությունների ժամանակին և անթերի կատարումն է պետության ֆինանսական գործունեությանը մասնակցող ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից:

Ֆինանսական հարկադրանքի էությունը, դերն ու նշանակությունը բնութագրող վերոհիշյալ առանձնահատկությունների վերլուծությունների հիման վրա, կարծում ենք, **ֆինանսական հարկադրանքը կարելի է բնութագրել որպես ֆինանսաիրավական նորմերով սահմանված հարկադրանքի միջոցների ամբողջություն, որոնք կիրառվում են դատական իշխանության, ֆինանսների ընդհանուր կառավարման մարմինների, պետության ֆինանսական ապարատի, ինչպես նաև ֆինանսական հսկողության մարմինների կողմից ֆինանսական գործունեության խախտումները նախազգուշացնելու, խափանելու, ինչպես նաև ֆինանսական հարկադրանքի այլ միջոցների կիրառմամբ հասարակության և պետության համար իրավախախտման վտանգավոր հետևանքները վերացնելու համար:**

Իրավագիտական հետազոտություններում քրեական պատժի և վարչական տույժերի ընդհանուր և տարբերակիչ առանձնահատկությունների ուսումնասիրություններին նվիրված գիտական վերլուծությունների ընթացքում առանձին գիտնականների թռուցիկ արված աղճատ դատողությունների հիման վրա, իրավագիտության մեջ չունենալով ֆինանսական իրավախախտումների, հարկադրանքի, պատասխանատվության և սանկցիաների ուսումնասիրություններին ուղղված բազային հետազոտություններ, **որոշ հեղինակների՝ անցյալ դարի 80-ական թվականներին արված դատողությունները հիմք ընդունելով, այսօր էլ կարծիք է ձևավորվել, թե ֆինանսական սանկցիաներ ամրագրող ֆինանսաիրավական նորմերը համարվում են վարչական-վերականգնողական ներգործության միջոցներ<sup>1</sup>:** Մինչդեռ իրավական-համակարգային վերլուծությունների տեսակետից, հասարակության արտադրատնտեսական գործունեության ձևերի զարգացումը հրամայաբար պահանջում է հստակեցնել, ճշգրտել **իրավական հարկադրման միջոցները՝** ըստ հասարակական կյանքի ճյուղերի զարգացման

<sup>1</sup> Նկատի ունենք ՌԴ «Բյուջետային օրենսգրքը»:  
<sup>1</sup> Տե՛ս **Бахрах Д.Н.** Административная ответственность граждан в СССР, էջ 22-23:

առանձնահատկությունների, ինչպիսի խնդիրների լուծմանն է ուղղված իրավագիտության մեջ ֆինանսական հարկադրանքի, պատասխանատվության ինքնուրույն<sup>2</sup> գործածության ճանաչումը, որը վաղուց իր տեսակարար կշռով զգացնել է տալիս հետխորհրդային մի շարք պետությունների ֆինանսական գործունեության մեջ:

Ֆինանսական սանկցիաների, քրեական պատժի և վարչական տույժերի հիմնական ընդհանրությունն է համարվում իրավաբանական անձանց կողմից հանրային-իրավական պարտավորությունների պահանջների խախտումները, որոնց համար գործող քրեական, վարչական և ֆինանսական օրենսդրությամբ սահմանված է պատասխանատվություն: Այդպիսի հանրային-իրավական պարտավորություններ պետության ֆինանսական գործունեության ոլորտում կարող են ծագել բյուջետային միջոցները ոչ նպատակային ծախսելու, հարկերը կամ այլ պարտադիր վճարումները չվճարելու, դրամական շրջանառության, արտարժույթի, արժեթղթերը, ինչպես նաև մաքսային գործառնությունների սահմանված կարգը խախտելու և այլ դեպքերը:

Գործնականում, քրեական, վարչական, ֆինանսական սանկցիաների ընդհանրության հիմք հանդիսացող հանրային-իրավական պարտավորությունների պահանջների խախտումները երբեմն հանգեցնում են պատասխանատվության այն տեսակների կիրառմանը, որը հղի է իրավաբանական պատասխանատվության հայեցակարգային լուրջ սկզբունքների խախտմամբ: Խոսքը վերաբերում է իրավունքի տարբեր ճյուղերի միևնույն իրավախախտման համար «կրկնակի» պատասխանատվության կիրառմանը, որպիսի խախտումների համակարգը այսօր համալրում է ՀՀ քրեական օրենսգրքի 7-րդ բաժինը, որի 122-132-րդ հոդվածները սահմանում են «Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը»<sup>1</sup>:

Ուսումնասիրությունները վկայում են, որ ՀՀ Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներ, որոնք հատկապես ուղղված են ֆինանսաիրավական և վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված պատասխանատվության և հարկադրանքի կիրառման մեկնաբանություններին, նոր հայեցակարգային դրույթներ են, որոնք հավաստում են ֆինանսաիրավական հարկադրանքի, սանկցիաների, պատասխանատվության ինքնուրույն գործելու անհրաժեշտության մասին: Այս առնչությամբ ստեղծված չափորոշիչները վկայում և հիմնավորում են ֆինանսաիրավական պատասխանատվության ինքնուրույն գործելու և ժամանակի հետ իրավաբանական պատասխանատվության տեսակների համակարգը համալրելու անհրաժեշտությունը:

Պատմական էքսկուրսները վկայում են, որ ժամանակին ՀՀ Սահմանադրական դատարանը, անդրադառնալով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի և Վարչական

<sup>2</sup> Տե՛ս **Тернова Л.В.** Налоговая ответственность - самостоятельный вид юридической ответственности // Финансы. 1998. N 9, էջ 27-29:

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքը, 2021 թվականի մայիսի 5-ի փոփոխություններով, եր., 2022թ.:

իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170<sup>3</sup> հոդվածի՝ (երկու իրավական ակտերում էլ խոսքը վերաբերում է հարկերը և պարտադիր վճարումները ժամանակին չվճարելուն)<sup>12</sup> ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործին, նոր հայեցակարգի ընդարձակ մեկնաբանություններում ընդգծում է. «Սահմանադրական դատարանը գտնում է, որ հարկային, ինչպես նաև վարչական հարաբերություններում իրավասու սուբյեկտները, ելնելով այդ հարաբերությունների բովանդակությունից ու առանձնահատկություններից անհրաժեշտաբար (օբյեկտիվորեն) կարող են հանդես գալ իրավական մի քանի կարգավիճակներով՝ միաժամանակ հանդես գալով թե՛ որպես հարկային և թե՛ վարչաիրավական հարաբերության սուբյեկտներ, և որոնց նկատմամբ միաժամանակ հարկային և վարչական պատասխանատվության միջոցների կիրառումը կարող է **մեկնաբանվել որպես արարքի համար իրավական կրկնակի պատասխանատվություն**»:

Այնուհետև, Սահմանադրական դատարանը, անդրադառնալով հարկային և վարչական օրենսդրության հիշատակված իրավական ակտերի բովանդակությանը, միևնույն արարքի համար կրկնակի պատասխանատվության սահմանման հնարավորությանը, չբացառելով վերջինիս հակասությունը, անդրադառնում է պատասխանատվություն սահմանող հիշատակված իրավունքի ճյուղերի նորմերի իրավական բովանդակության համադրված վերլուծությանը և եզրակացնում է, որ **վարչական իրավախախտումների վերաբերյալ դեռևս գործող օրենսգրքի նորմատիվ համապատասխան կարգավորումները թույլ չեն տալիս միանշանակ (թեկուզ տեսականորեն) բացառել հարկային պարտավորությունների բնագավառում միևնույն արարքի համար կրկնակի պատասխանատվության (հարկային և վարչական) ենթարկել (հատկապես անհատ ձեռնարկատեր հանդիսացող սուբյեկտի օրինակով)<sup>1</sup>:**

Գործնականում ունենալով ՀՀ սահմանադրական դատարանի վերը հիշատակված պարզաբանումները՝ նկատենք, որ պատասխանատվության ենթակա սուբյեկտների տարանջատման հարցը այսօր էլ «առհասարակ հստակեցված չէ թե՛ «Հարկային օրենսգրքի» և թե՛ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով»: Հիշատակված իրավական ակտերի հայեցակարգը չի համապատասխանում ՀՀ առկա սոցիալական, տեղեկատվական և օրենսդրության զարգացման ընդհանուր տրամաբանությանը»:

Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն սահմանող սանկցիաները լայն իմաստով ոչ միայն «կրկնապատկում», այլև «եռապատկում» են միևնույն իրավախախտման համար պատասխանատվության սահմանումը,

<sup>2</sup> Ծանուցում. Հիշատակված իրավական ակտերի դրույթներն այսօր համալրում են ՀՀ հարկային և ՀՀ վարչական իրավունքներին վերաբերող օրենսգրքերը:

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2014 թ. փետրվարի 18-ի՝ «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության դիմումի հիման վրա «Հարկերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170.3-րդ հոդվածի» ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով», թիվ ՍԴԴՆ-1139 որոշումը:

քանի որ հիշատակված իրավունքի ճյուղի օրենսդրությամբ իրավախախտման տեսակային օբյեկտը՝ որպես հասարակական հարաբերություններ, դուրս է քրեական կարգավորման առարկայի շրջանակներից, և ուղղված են դրամական միջոցների հավաքման, բաշխման և օգտագործման գործընթացների խախտմանը: Հետևաբար, իրավաբանական անձանց պատասխանատվությունը պետք է քննարկել միայն ֆինանսական իրավունքի տիրույթում:

Ֆինանսական սանկցիաների, քրեական և վարչական պատասխանատվության միջոցների թվացյալ ընդհանրություններից զատ, առկա են մի շարք սկզբունքային տարբերություններ, որոնց օրինաչափություններն ընդգծվում են որպես ֆինանսական սանկցիաների առանձնահատկություններ:

**Այսպես, ֆինանսական սանկցիաներ սահմանող իրավական նորմերը տարբերվում են քրեական և վարչական իրավունքի սանկցիաներից հետևյալ առանձնահատկություններով.**

1. ֆինանսական սանկցիաների կիրառման հիմքը ֆինանսական իրավախախտումն է, որը կարող է արտահայտվել այնպիսի գործողությամբ կամ անգործությամբ, որը միաժամանակ կարող է ճանաչվել վարչական, կարգապահական զանցանք, ինչպես նաև հանցագործություն: Այս հանգամանքի պատճառն այն է, որ ֆինանսական իրավախախտումներն իրենց էությամբ կապված են իրավախախտների կողմից հանրային-իրավական պարտավորությունները չկատարելու հետ: Վերջինիս համար գործող օրենքները սահմանում են քրեական, վարչական կամ կարգապահական պատասխանատվություն: Ֆինանսական սանկցիաների այս տարբերությունը բխում է ֆինանսական իրավախախտման կազմի առանձնահատկություններից, որով վերջինս տարբերվում է թե՛ հանցագործություններից և թե՛ վարչական զանցանքներից:

2. Ինչպես քրեական պատիժը, այնպես էլ վարչական տույժերը, որպես կանոն, ունեն պատժողական բնույթ, մինչդեռ նույնը չի կարելի ասել ֆինանսական հարկադրանքի (սանկցիաների) մասին: Վերջիններս օժտված են միայն իրավավերականգնողական բնույթով, որով և սահմանազատվում են թե՛ քրեական պատիժից և թե՛ վարչական տույժերից: Գործնականում երբեմն ֆինանսական իրավախախտման հետևանքով ֆինանսական համակարգի այս կամ այն օղակին հասցվում է այնպիսի վնաս, որն օբյեկտիվ չափանիշներով անհնար է գնահատել: Այս դեպքերում է, որ օրենսդիրը սուբյեկտիվ մոտեցմամբ, որպես բացառություն, թույլատրում է կիրառել ֆինանսական-պատժողական հարկադրանքի միջոցներ: Օրինակ «Հարկային օրենսգրքի» 407-րդ հոդվածում ասվում է, որ հարկվող օբյեկտը թաքցնելու կամ այն պակաս ցույց տալու դեպքում հարկ վճարողից սույն օրենքով սահմանված կարգով **գանձվում է հարկի գումարը, ինչպես նաև տուգանք 50 տոկոսի չափով:**

3. Ֆինանսական հարկադրանքի միջոցների (սանկցիաների) հիմնական յուրահատկությունը, որով տարբերվում է քրեական և վարչական սանկցիաներից այն է, որ վերջինս կիրառվում է միայն ֆինանսական միասնական համակարգի այս կամ այն օղակի անմիջական ենթակայության տակ գտնվող անձանց նկատմամբ: Մնացած բոլոր դեպքերում, եթե ֆինանսական գործառույթների

խախտումներ են հայտնաբերվում ֆինանսական համակարգին ոչ ենթակա ոլորտներում, ապա վերջիններիս նկատմամբ կիրառվում են քրեական կամ վարչական սանկցիաներ:

Ֆինանսական հարկադրանքի այս յուրահատկությունը հատկապես ներգործության շրջանակների իմաստով ավելի լայն է. այն կիրառվում է նաև իրավաբանական անձ չհանդիսացող այնպիսի կազմակերպությունների նկատմամբ, ինչպիսիք են, օրինակ, ֆինանսական համակարգի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները, պետական իշխանության և տեղական ինքնակառավարման համակարգի մի շարք մարմինները:

4. Ֆինանսական հարկադրանքի միջոցները, ի տարբերություն քրեական և վարչական սանկցիաների, հավասարապես կարող են կիրառվել ինչպես ֆիզիկական անձանց, այնպես էլ **կազմակերպությունների** նկատմամբ: Կազմակերպությունները, ինչպես վերը նշվեց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեն և գործնականում հանդես են գալիս ֆինանսական գործունեության տարբեր հարաբերությունների սուբյեկտներ: Ակնհայտ է, որ քրեական պատիժը օրենքով սահմանված կարգով կիրառվում է միայն ֆիզիկական անձանց նկատմամբ<sup>1</sup>: **Ինչ վերաբերում է վարչական սանկցիաներին, ապա վերջիններս կիրառվում են կառավարման ոլորտում կամային, գիտակցված և մեղավորությամբ կատարված գործողության կամ անգործության համար, ինչպես նշված է ՀՀ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքում: Տրամաբանորեն դժվար չէ նկատել, որ իրավաբանական անձինք և կազմակերպությունները սեփական կամային կամ անհատական գիտակցական հատկանիշներից զուրկ են, հետևաբար կազմակերպության նկատմամբ չի կարելի կիրառել պատժողական սանկցիաներ, այս հիմքերով իրականում պատասխանատու չեն կազմակերպությունների անմեղ պաշտոնատար անձինք կամ հիմնադիրները, աշխատողները, վարկավորողները: Այսպիսի դեպքերում կազմակերպությանը վարչական, առավել ևս քրեական պատասխանատվության ենթարկելը կարծում ենք աննպատակահարմար է<sup>2</sup>: Նման խախտումների դեպքերում առաջարկվում է կիրառել ոչ թե վարչական պատժող սանկցիաներ, այլ լայնորեն կիրառել ֆինանսական հարկադրանքի միջոցներ, որոնք, ըստ էության, ունեն միայն վերականգնողական բնույթ և զուրկ են իրավախախտին պատժելու նպատակից:**

5. Վերջապես, տարբեր են նաև ֆինանսական սանկցիաների և քրեական ու վարչական սանկցիաների կիրառման կարգը (խոսքը վերաբերում է իրավախախտումների գործերով դատավարությանը կամ վարույթի առանձնահատկություններին):

**Ժամանակակից իրավաբանական պատասխանատվության տեսակների համակարգում իրենց յուրահատկություններով քաղաքացիաիրավական պա-**

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ «Քրեական օրենսգիրք», 48-րդ հոդված:

<sup>2</sup> Ծանուցում. ՀՀ գործող «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի «Ընդհանուր մասի» 9-40-րդ հոդվածները վկայում են, որ «իրավաբանական անձի վարչական պատասխանատվությունը իրավաբանորեն հիմք չունի»:

**տասխանատվությունից սահմանազատվում են ֆինանսական սակցիաները:** Նկատենք, որ իրավական պատասխանատվության այս ձևերի միակ ընդհանրությունն այն է, որ թե՛ քաղաքացիաիրավական և թե՛ ֆինանսաիրավական պատասխանատվությունը կրում են հասցված վնասի և իրավունքների վերականգնողական բնույթ, որը հատուկ է այս ճյուղերի սանկցիաներին:

Այս ընդհանրության կողքին, ուսումնասիրությունների շնորհիվ կարելի է հանգել այն եզրակացության, որ պատասխանատվության այս ձևերն ունեն մի շարք յուրահատկություններ, որոնց իմացությունը գործնականում, կարծում ենք, կօգնի շուտ կողմնորոշվել և սահմանազատել ֆինանսական պատասխանատվության կիրառումը, որն իր հերթին կնպաստի ֆինանսատնտեսական և շուկայական հարաբերություններում սուբյեկտների իրավունքների, ֆինանսական շահերի երաշխավորված պաշտպանության կազմակերպմանը:

Քաղաքացիաիրավական և ֆինանսական հարկադրանքի միջոցների գործնական կիրառման հետևանքների իրավական արժևորումը նույնպես մատնացույց է անում պատասխանատվության այս ձևերի տարբերակիչ մի շարք յուրահատկություններ:

1) Այսպես, ավանդաբար հայտնի է, որ քաղաքացիաիրավական պատասխանատվությունը (սանկցիաները) ունի գույքային կամ անձնական ոչ գույքային բնույթ: Ֆինանսական սանկցիաներին նույնպես ներհատուկ են գույքային-դրամական բնույթը, սակայն վերջիններս բացառապես օժտված են գույքային, իշխանա-կազմակերպական բնույթով, քանի որ լիազոր ֆինանսական մարմինը անմիջապես հարկադրանքի կիրառմամբ ներգործում է իրավախախտի ոչ միայն դրամական միջոցների, այլ դրամական միջոցների ֆոնդերի վրա: **Հետևաբար, ֆինանսական ներգործության նպատակը ոչ թե իրավախախտի դրամական միջոցների բռնագանձումն է, այլ հանդես է գալիս որպես իրավունքների հարկադրական սահմանափակումների մի ամբողջ համակարգ, որն իրավախախտին զրկում է կամ սահմանափակում սեփական դրամական ֆոնդերը համալրելու հնարավորությունից կամ արգելում դրանց օգտագործումը:**

2) Կարծում ենք՝ քաղաքացիաիրավական և ֆինանսական հարկադրանքի երկրորդ տարբերիչ առանձնահատկությունն այն է, որ առաջինները, որպես կանոն, կիրառվում են տուժողի գույքային սուբյեկտիվ իրավունքների խախտման հիմքերի առկայությամբ, **մինչդեռ ֆինանսական սանկցիաների կիրառման հիմքն իրավախախտի կողմից որոշակի հանրային-իրավական պարտավորությունների չկատարումն է, որի հետևանքը ֆինանսական իրավախախտումն է:**

3) Քաղաքացիաիրավական և ֆինանսական սանկցիաների սահմանազատման հաջորդ առանձնահատկությունն այն է, որ խախտված գույքային իրավունքների պաշտպանության նպատակով սանկցիաներ կիրառելու նախաձեռնությամբ հանդես են գալիս քաղաքացիաիրավական հարաբերությունների այն սուբյեկտները, որոնց հասցվել է գույքային վնաս: Ինչ վերաբերում է ֆինանսաիրավական հարկադրանքի կիրառմանը, ապա այսպիսի նախաձեռնությամբ օժտված են պետությունը կամ տեղական ինքնակառավարման մարմինները:

4) Վերջապես, պատասխանատվության այս ձևերը կարելի է սահմանազատել

նաև քաղաքացիաիրավական և ֆինանսական սանկցիաների կիրառման որոշակի տարբերություններով, որոնք վերաբերում են պետական հարկադրանքի կիրառման վարույթին:

Ֆինանսաիրավական հարկադրանքի գործառույթների, ինչպես նաև դրանց կիրառման նպատակների արդյունավետության գնահատման և իրավական պատասխանատվության ձևերի համակարգում վերջիններիս տեղն ընդգծելու նպատակով անհրաժեշտ է բացահայտել այն յուրահատկությունները, որոնցով **Ֆինանսական հարկադրանքի միջոցները հստակորեն սահմանազատվում են կարգապահական և հատկապես աշխատողների նյութական պատասխանատվության ենթարկելու կարգից:**

Կարգապահական տույժերն իրավունքի տեսության ոլորտում վաղուց ճանաչված են որպես աշխատանքային-ծառայողական գործունեության ոլորտում տեղ գտած և հասարակական վտանգ ներկայացնող իրավախախտումների կարգավորման միջոց, որոնք նպատակ են հետապնդում հասարակական համընդհանուր աշխատանքային գործունեության բոլոր ոլորտներում (արտադրություն, արդյունաբերություն, սոցիալական ծառայություններ) ապահովել նորմալ և անվտանգ աշխատանքային դիժմ:

Իրավական հարկադրանքի բնույթի հետազոտություններին ուղղված իրավագետների բոլոր **գիտական հետազոտություններում կարգապահական տույժերը դասվում են պատժողական բնույթի սանկցիաների թվին, որոնց ծառայական նշանակությունն աշխատանքային կարգապահության ամրապնդումն է:** Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, կարգապահական տույժերի միջոցով կարգավորվող հասարակական հարաբերությունները, հատկապես կապված պաշտոնատար անձանց աշխատանքային գործունեության կարգավորման հետ, երբեմն դուրս են գալիս վերջիններիս ծառայական գործառույթից: Խոսքը վերաբերում է, օրինակ, պաշտոնատար անձանց (դատավորներին, դատախազներին), որոնք իրենց բացասական աշխատանքային վարքագծով ստվերում և արատավորում են համապատասխան պետական մարմինների համակարգի հեղինակությունը և վստահությունը հասարակության շրջանում:

Բնական է, նման դեպքերում խոսքը միայն կարգապահական տույժերով հարցի լուծման մասին չէ: Պատժողական քաղաքականության դիրքերից դիտարկելով՝ նման աշխատանքային իրավախախտումների դեպքում, միևնույն իրավախախտման կարգավորման նպատակով կիրառվում է նաև վարչական տույժ:

Նմանօրինակ խախտումների համար կիրառվող կարգապահական տույժը, ըստ էության, **արտահայտում է աշխատանքային ծառայության մեջ ներքին իշխանակարգապահական լիազորությունների գործադրումը**, որը, որպես կանոն, կիրառում է վերադաս պաշտոնատար անձը և արտահայտում է աշխատանքային-ծառայողական կախվածությունը, իսկ **այդ պահին կիրառվող վարչական կամ ֆինանսական հարկադրանքի միջոցները հանդես են գալիս որպես պետական համընդհանուր նշանակության հարկադրանք**, որը կիրառվում է աշխատանքային կարգապահության խախտման դեպքում:

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ ◆ 4(121)2025 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ

Աշխատանքային պայմանագրով ամրագրված աշխատանքային հարաբերությունների սուբյեկտների շահերի պաշտպանության տեսակ է նաև օրենքով սահմանված նյութական պատասխանատվությունը:

ՀՀ «Աշխատանքային օրենսգիրքը» սահմանում է նյութական պատասխանատվության հիմքերը: Այսպես, օրենսգրքի 231-րդ հոդվածով նյութական պատասխանատվություն է առաջանում այն դեպքում, երբ աշխատանքային պայմանագրի կողմերից մեկը (գործատուն կամ աշխատողը), չկատարելով կամ ոչ պատշաճ կատարելով իր պարտականությունները, վնաս է պատճառում մյուսին:

Գործող «Աշխատանքային օրենսգիրքը» սահմանում է այն խախտումները, որոնց դեպքերում նյութական պատասխանատվության են ենթարկվում ինչպես գործատուն, այնպես էլ՝ աշխատողը:

Նշված դեպքերում գործատուն հատուցում է պատճառած վնասը՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

**Սահմանվում են նաև աշխատողին նյութական պատասխանատվության ենթարկելու դեպքերը:** Դիցուք, օրենսգրքի 237-րդ հոդվածով աշխատողը պարտավոր է փոխհատուցել գործատուին պատճառած նյութական վնասը:

Օրենսգրքի 238-րդ հոդվածը սահմանում է լրիվ ծավալով գործատուի պատճառած վնասի հատուցման կարգը: Այսպես, աշխատողը պարտավոր է հատուցել գործատուին պատճառած վնասը լրիվ ծավալով, բայց ոչ ավելի, քան նրա երեք ամսվա միջին աշխատավարձի չափն է: Աշխատողը լիակատար նյութական պատասխանատվություն կարող է կրել միայն այն դեպքում, երբ գործատուի հետ կնքել է գրավոր պայմանագիր:

Պետական հարկադրանքի առանձին տեսակների էության իրավական առանձնահատկությունների բացահայտումները ըստ մասնավոր և հանրային ճյուղերի ինքնանպատակ չեն: Այս առանձնահատկություններն իրավունքի տարբեր ճյուղերի յուրահատկությունների դրսևորումներն են, որոնք հարյուրամյակների ընթացքում իրավագետ-իրավաբանների կողմից լայնածավալ հետազոտությունների և բացահայտումների շնորհիվ ձևավորվել են որպես ուսմունք և հայեցակարգ, որը որպես իրավաքաղաքական ռազմավարություն առաջարկում է իրավագիտական նոր կանխատեսումների ձևավորումը և ճանապարհի հարթում բարձրարժեք օրենսդրության ձևավորման և նկատված թերությունների և բացթողումների շտկման համար:

Նկատենք, որ պետական հարկադրանքի իրավունքի առանձին ճյուղերի դրսևորումները, հատկապես հարկադրանքի կիրառումը գործնականում արտահայտվում է իրավաբանական պատասխանատվության կիրառմամբ, որը տեղիք է տվել ՀՀ քրեական օրենսգրքում «իրավաբանական անձանց նկատմամբ քրեական պատասխանատվության սահմանման քրեաիրավական նոր ինստիտուտի ձևավորմանը», որին ցավոք հայ քրեագետներ չեն արձագանքում:

Ինչպես հիշատակվեց, իրավական հարկադրանքի գործնական կիրառումը ծնում է իրավաբանական պատասխանատվության ինստիտուտը, որի դասակարգումները պայմանավորված են այն իրավախախտումների բնույթով, հասարակական վտանգավորության աստիճանով, որոնք ըստ իրավախախտման

սուբյեկտների արձանագրվում են առօրյայում հասարակական կեցության ոլորտում:

Իրավաբանական պատասխանատվության մշակված լինելու հիմնահարցերն այսօր քիչ թե շատ հաջողություններ են արձանագրել իրավունքի առանձին ճյուղերում (քրեական, վարչական), որոնք նույնպես այժմ են ընկնում գիտնականների լուրջ տարածայնություններով: Վերջիններս կապված են պատասխանատվության առաջացման պատճառների, ծագման հիմքերի և ժամկետների (իրավահարաբերությունների-իրավաբանական փաստերի) հետ:

Այսօր, իրավաբանական պատասխանատվության կիրառման առանձին ոլորտներով է զբաղվում նաև ֆինանսական իրավունքը, որի հետազոտման առարկայի առանձնահատկությունները մեծ հետաքրքրություն են առաջացրել իրավաբան գիտնականների շրջանում:

Հիմնախնդրի հետազոտման նպատակով իրավաբանական գրականության վերլուծությունները վկայում են, որ իրավաբանական պատասխանատվության նախասկզբնական հետազոտությունները սկսվել են քրեական և գույքային (քաղաքացիա-իրավական) պատասխանատվության ձևերի ուսումնասիրություններից: Հենց դրանք էլ հետագայում բավարար հող նախապատրաստեցին ինչպես իրավունքի ընդհանուր տեսության, այնպես էլ՝ իրավունքի առանձին ճյուղերին հատուկ «իրավաբանական պատասխանատվություն» հասկացության և իրավական կարգավորման հիմնախնդիրները բացահայտելու համար: Խոսքը վերաբերում է վարչական և կարգապահական պատասխանատվության հիմնահարցերի վերլուծություններին, որոնք այսօր ունեն համակարգված օրենսդրություն և գործնականում կիրառվում են համապատասխան օրենսգրքերով սահմանված սկզբունքներին համապատասխան: Ինչ վերաբերում է «ֆինանսաիրավական պատասխանատվություն» հասկացությանը, առանձնահատկություններին, գործառույթներին, ինչպես նաև կիրառման հիմքերին, ապա մեր հանրապետությունում ֆինանսական գործունեության խախտումների համար պատասխանատվություն սահմանող թե՛ օրենսդրությանը, թե՛ առավել ևս ֆինանսական պատասխանատվության գիտահետազոտական վերլուծություններին նվիրված հետազոտություններ չկան, որը և հայրենական գիտության համար օրակարգի խնդիր է դարձնում ֆինանսիրավական ցանկացած ինստիտուտի գիտական հետազոտման հարցը:

Հետևաբար, իրավաբանական պատասխանատվության հիմնահարցի լիարժեք վերլուծությունների արդյունքները մեթոդաբանական հիմք են «ֆինանսաիրավական պատասխանատվություն» հասկացության, առանձնահատկությունների, կիրառման իրավական հիմքերի և ֆինանսաիրավական խախտումների վարույթի և դրանց իրավական կարգավորմանը վերաբերող հիմնախնդիրների հետազոտման և գիտական վերլուծությունների համար:

Իրավաբանական պատասխանատվության գիտահետազոտական վերլուծություններով զբաղվող իրավաբան գիտնականների ճնշող մեծամասնությունն այն կարծիքին է, որ իրավաբանական պատասխանատվությունը կապված է

իրավախախտողի հակաիրավական վարքագծի դրսևորումների հետ, որն առաջ է բերում պետական հարկադրանքի և պատժի կիրառման անհրաժեշտություն:

«Իրավաբանական պատասխանատվություն» հասկացության, իրավական բնույթի բացահայտմանն ուղղված իրավական տեսությունների ոլորտում առանձնանում է հատկապես իրավագետ Օ.Է. Լեյստի ուսմունքը, ըստ որի «պատասխանատվությունը» միաժամանակ կարող է արտահայտել մի քանի ինքնուրույն սոցիալական երևույթներ, որոնց համակարգում անհրաժեշտ է սահմանազատել իրավախախտների դեպքում՝ իրավաբանական պատասխանատվությունը և կառավարման ոլորտում հանձնարարված գործի համար՝ կառավարչական պատասխանատվությունը<sup>1</sup>:

Իրավական պատասխանատվության ինստիտուտի ուսումնասիրությունները վկայում են, որ գիտնական-իրավաբանների ճնշող մեծամասնությունն այն կարծիքին է, որ իրավաբանական պատասխանատվությունը, ըստ էության, պետական հարկադրանքի և տարբեր ներգործության միջոցների համակցություն է, որը կիրառվում է իրավախախտում թույլ տված անձի նկատմամբ: Ավելի պարզ, իրավաբանական պատասխանատվությունը հակաիրավական գործողության կամ անգործության դատապարտումն է, որն իրավախախտի նկատմամբ արտահայտվում է վերջինիս անձնական և գույքային իրավունքների սահմանափակումներով<sup>2</sup>:

«Իրավաբանական պատասխանատվություն» հասկացության, բովանդակության, ինչպես նաև էության ուսումնասիրություններին նվիրված բազմաթիվ հետազոտություններ են հայտնի, որոնք, ըստ էության միմյանցից տարբերվում են միայն սահմանման արտահայտությունների տարբերություններով<sup>2</sup>: Իրավաբանական գրականության մեջ ժամանակին և այսօր իրավաբանական պատասխանատվությանն առնչվող գիտական հետազոտություններում արտահայտված կարծիքների ընդհանրացման հիման վրա կարելի է առանձնացնել էական նշանակության երեք պահեր: Որպես կանոն, իրավաբանական պատասխանատվությունը անքակտելիորեն կապված է իրավախախտման հետ: Երկրորդ՝ այն արտահայտվում է իրավախախտի նկատմամբ պետական հարկադրանքի միջոցների կիրառմամբ, և երրորդ՝ պետական հարկադրանք պարունակող իրավական նորմում սահմանված է նաև հակաիրավական գործողության կամ անգործության դատապարտման կարգը:

Իրավաբանական պատասխանատվության համակարգում ֆինանսական իրավախախտումների համար պատասխանատվության կիրառման հիմքը պետության տնտեսական անվտանգության ապահովումն է: Այն, լինելով ֆինանսական օրենսդրության հիմնարար սկզբունք, իրականացվում է «ՀՀ բյուջետային համակարգի մասին», հարկային, վարչական և քրեական

<sup>1</sup> Տե՛ս *Լեյստ Օ.Է. Санкции и ответственность по советскому праву. - М.: Изд. МГУ, էջ 121, 218-222:*

<sup>1</sup> Տե՛ս *Иоффе О.С., Шаргородский М.Д. Вопросы теории права. Նշվ. աշխ., էջ 314-318:*

<sup>2</sup> Տե՛ս *Халфина Р.О. Общее учение о правоотношении. - М., 1974, էջ 320: Гойман-Червонюк В.М. Очерк теории государства и права. - М., 1996, էջ 307-308:*

օրենսգրքերով, ինչպես նաև ֆինանսական իրավախախտումների դեպքում ներգործության միջոցներ նախատեսող այլ իրավական ակտերով:

▪ ՀՀ ֆինանսական, ինչպես նաև այլ օրենսդրության ճյուղերը ֆինանսական գործունեության իրավախախտումների դեպքերում նախատեսում են ուղղակի պատասխանատվության միջոցներ: Հատկապես բյուջետային և վարկային իրավախախտումների համար պատասխանատվության միջոցներն ուղղակի կարելի է համարել՝ ելնելով այն իրականությունից, որ ՀՀ օրենսդրական և ենթօրենսդրական այլ ակտերով ևս ֆինանսական իրավախախտումների համար անմիջական ներգործության անուղղակի եղանակներ նախատեսող ակտեր կան, որոնց պահանջները նույնպես պարտադիր են: ՀՀ ֆինանսական գործունեության ոլորտի իրավախախտումների համար կիրառվող պատասխանատվության տեսակների ուսումնասիրությունների և ՀՀ ֆինանսական օրենսդրությամբ ամրագրված սանկցիաների վերլուծությունների հիման վրա դժվար չէ նկատել, որ **ֆինանսական իրավախախտումը հակահրավական, մեղավոր գործողություն է (անգործություն), որը խախտում է ֆինանսական օրենսդրությամբ ամրագրված հասցեագրումները: Դրանով վնասվում է պետության ֆինանսական համակարգը և այդպիսի գործողությունների կատարման համար մեղավոր անձանց և կազմակերպությունների նկատմամբ կիրառվում են ֆինանսական հարկադրանքի միջոցներ:**

Ֆինանսական իրավախախտումը՝ որպես իրավական պատասխանատվության փաստացի հիմք, ինչպես իրավունքի մյուս ճյուղերում, բնութագրվում է չորս տարրերով, որոնք ամբողջացնում են իրավախախտման կազմը: Ֆինանսական իրավախախտման կազմ ասելով՝ հասկացվում է օրենքով սահմանված այնպիսի հատկանիշների ամբողջությունը, որոնց առկայության դեպքում պետության ֆինանսական համակարգի հակահրավական գործողությունը համարվում է իրավախախտում, այլ խոսքով՝ ամբողջական է դառնում ֆինանսական իրավախախտման կազմը: Դրանցից որևէ մեկի բացակայության դեպքում ֆինանսական իրավախախտումը բացակայում է, հետևաբար բացակայում է նաև ֆինանսական պատասխանատվության ենթարկելու հիմքը: Ֆինանսական իրավախախտման կազմն այն իրավական չափանիշը և անհրաժեշտ ու բավարար հատկանիշների ամբողջությունն է, որը հնարավորություն է ընձեռում արարքը որակել որպես ֆինանսական իրավախախտում և անձին ենթարկել ֆինանսական պատասխանատվության: **Ֆինանսական իրավախախտման տարրերն են՝ իրավախախտման օբյեկտը, իրավախախտման օբյեկտիվ կողմը, իրավախախտման սուբյեկտը և իրավախախտման սուբյեկտիվ կողմը:**

Իրավաբանական անձի քրեական պատասխանատվության իրավագիտական հիմնախնդիրների բացահայտումներին ուղղված հետազոտությունների առանցքը կազմող պետական հարկադրանքի, իրավաբանական պատասխանատվության ճյուղային առանձնահատկությունների համեմատական վերլուծություններն

<sup>1</sup> St'u **Арсланбекова А.З.** Проблемы определения понятия и состава бюджетного правонарушения // *Научное обозрение*. - М.: Наука, 2008, N 2):

աննպատակ չեն, քանի որ հիմնախնդրի ամբողջական վերլուծությունները՝ կապված վերը հիշատակված իրավական ինստիտուտների պարզաբանումների հետ, համակարգված իրավագիտական հայեցակարգային ուսմունքներ են, որոնք նպատար ունենում և դյուրին են դարձնում հիմնախնդրի լուսաբանման բարդությունները՝ լույս սփռելով ստվերոտ կողմերի վրա:

Անդրադառնալով «իրավաբանական անձի» քրեական պատասխանատվության գործող իրավակարգավորումների քրեաիրավական հիմնավորումներին՝ ընդգծենք, որ «իրավաբանական անձը» տասնյակ իրավունքի ճյուղերի իրավահարաբերությունների սուբյեկտ է, և գործնականում մեծապես հանդես է գալիս ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային իրավունքի այնպիսի ճյուղերում, ինչպիսիք են՝ քաղաքացիական, ձեռնարկատիրական, առևտրային, բիզնես, վարչական, ֆինանսական, հարկային իրավունքը և այլ իրավունքի ճյուղերը: Իրավաբանական անձը այսօր քրեական իրավախախտման, հետևաբար քրեական պատասխանատվության սուբյեկտ է, որը կարգավիճակի առանձնահատկություններով սահմանազատվում է ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվության ներկայացվող իրավական մի շարք պահանջներով:

Իրավաբանական պատասխանատվության իմաստով իրավունքի հիշատակված բոլոր ճյուղերում պատասխանատվության ենթարկման պահանջները և չափորոշիչները գրեթե նույնն են, բացառությամբ իրավախախտման կազմին ներկայացվող էական այն պահանջների, որոնց համակցությունը հնարավոր է դարձնում խոսել իրավախախտման, ըստ հասարակական վտանգավորության, հանցագործության և զանցանքի մասին: Այլ խոսքով, ինչպես վերը հիշատակվել է, իրավաբանական պատասխանատվության հիմքն իրավախախտման ամբողջական կազմի՝ սուբյեկտի, օբյեկտի, օբյեկտիվ կողմի և սուբյեկտիվ կողմի համակցությունն է: Հիշատակված տարրերից որևէ մեկի բացակայության պայմաններում խոսք չի կարող գնալ իրավախախտման (հանցագործությունների կամ զանցանքի) մասին:

Իրավաբանական անձի քրեական պատասխանատվության գիտական հիմնավորման կամ բացառման, ինչպես նաև իրավաբանական անձի նկատմամբ կիրառվող քրեաիրավական պատասխանատվության օրինականությունը և արդյունավետության ապահովման հիմնախնդիրները փնտրենք գիտական տեսություններում, որոնք կնպաստեն իրավաբանական անձի պատասխանատվության հիմնավորումներով աջակցել իրավաստեղծ մարմիններին օրենսդրական ամրագրումներով, հիմնավոր վերանայել «իրավաբանական անձի» քրեական պատասխանատվության իրավակարգավորումները՝ առաջնությունը վերապահելով հատկապես «իրավաբանական անձանց» ֆինանսաիրավական պատասխանատվության օրենսդրության ձևավորմանը:

Վերը հիշատակված իրավական հիմնախնդրի լուծման նպատակով իրավաբանական անձի պատասխանատվության արդյունավետության, օրինականության դիրքերից ներկայացնենք ավանդական իրավունքի ճյուղերի կողմից իրավաբանական անձին պատասխանատվության ենթարկելու գործող օրենսդրական ակտերի իրավական կարգավորումների առանձնահատկու-

թյունները, որոնցից կատարված անտրամաբանական, կցկտուր, աղճատված փոփոխություններով ձևավորվել է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 7-րդ բաժնի 20-րդ գլուխը՝ արձանագրելով իրավաբանական անձի քրեական պատասխանատվության ընդհանուր պայմանները:

Ուսումնասիրությունները վկայում են, որ կարգավիճակի իրավական առանձնահատկությունների շարքում իրավաբանական գրականության, անգամ գործող ֆինանսական համակարգի կարգավորմանն ուղղված օրենսդրական ակտերում հստակեցված չէ իրավաբանական անձին պատասխանատվության ենթարկելու զանցակազմի այնպիսի էական հատկանիշ, ինչպիսին **իրավախախտի սուբյեկտիվ կողմի** բնութագիրն է, առանց որի խոսք չի կարող լինել ֆինանսական իրավախախտման, առավել ևս՝ պատասխանատվության ենթարկելու մասին:

Ինչպես վերը հիշատակվել է, ֆինանսական իրավախախտման կազմի տարրերից է իրավաբանական անձի սուբյեկտիվ կողմը, որը **իրավախախտում կատարած անձի՝ իր կողմից թույլ տված իրավախախտումը գնահատելու հնարավորությունն է և անձի հոգեկան վիճակը**: Ի տարբերություն ֆիզիկական անձանց, ֆինանսական իրավահարաբերությունների այնպիսի յուրահատուկ մասնակիցները, ինչպիսիք են **իրավաբանական անձինք, օժտված չեն անհատական գիտակցությամբ, այդ պատճառով իրավագիտության մեջ արտահայտվում են տեսակետներ կազմակերպությունների մեղքի լիարժեք ուսումնասիրման (բացահայտման) անհնարինության վերաբերյալ**:

Ֆինանսական իրավախախտման կազմի այս վերջին հատկանիշի հետ կապված պետք է նկատել, որ ՀՀ օրենսդրության համաձայն այն կիրառելի է միայն այնպիսի ֆինանսական իրավախախտումների համար, որոնք առաջացնում են վարչական կամ քրեական պատասխանատվություն: Օրինակ, **ՀՀ հարկային օրենսդրությունը հարկային պատասխանատվության կիրառման ժամանակ հաշվի չի առնում անձի մեղքը**<sup>1</sup> (ի տարբերություն ՌԴ հարկային օրենսդրության): Հարկային օրենսդրությամբ վարչական և քրեական պատասխանատվություն սահմանված է միայն քաղաքացիների համար, ուստի կազմակերպության մեղքի գնահատման խնդիր չի առաջանում այն իրավախախտումների համար, որոնց պատասխանատուն կազմակերպությունն է: **Հարկային ծառայության մարմինների կողմից կիրառվող պատասխանատվության հիմքերի գործնական ուսումնասիրությունները վկայում են, որ իրավաբանական անձանց կողմից թույլ տրված իրավախախտումների պատճառները հանգում են կոնկրետ պաշտոնատար անձանց գործողություններին, դրանց դրդապատճառներին կամ այդ անձանց անզգուշությանը**: Այս պայմաններում միանգամայն տրամաբանական են ՌԴ հարկային օրենսգրքի 28-րդ հոդվածով սահմանված կանոնները, ըստ որոնց՝ կազմակերպության օրինական ներկայացուցիչների գործողությունները (անգործությունը)՝ կապված հարկային օրենսդրությամբ

<sup>1</sup> Տե՛ս Սուքիասյան Գ.Ա., Օսիկյան Ա.Հ., Սուքիասյան Ն.Գ., Հարկային իրավունք: Եր., «Տնտեսագետ», 2011, էջ 279:

կարգավորվող հարաբերություններում իրավաբանական անձի մասնակցության հետ, համարվում են այդ կազմակերպության գործողությունները (անգործությունը):

ՌԴ վարչական, քաղաքացիական օրենսդրության հայեցակարգերի ընդօրինակումների հիման վրա, հիմք ընդունելով ՌԴ հարկային օրենսդրության վերը հիշատակված դրույթները՝ այսօր ՀՀ ՎԻՎ օրենսգրքում փորձ է կատարվում ամրագրել իրավաբանական անձանց պարտականության համանման մոդել, ըստ որի իրավաբանական անձի վարչական պատասխանատվությունը հիմնավորելու նպատակով ՎԻՎ օրենսգրքում ընդգծվում է՝ **եթե արարքը կատարել է իրավաբանական անձի աշխատողը, մարմինը կամ իրավաբանական անձի անունից հանդես գալու իրավունք ունեցող անձը՝ գործելով իրավաբանական անձի անունից (ի պաշտոնե):** Կարծում ենք նման դիրքորոշման առիթ են դարձել քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված գույքային պատասխանատվության առանձին տեսակների համար սահմանված պատասխանատվությունը, որով տնտեսական, ձեռնարկատիրական գործունեության ոլորտում խոսք չի կարող լինել վարչական պատասխանատվության մասին<sup>1</sup>: **Հետևաբար, ՎԻՎ օրենսգրքում կարելի է հավելել, որ իրավաբանական անձինք պատասխանատվության են ենթարկվում քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով: Հիմնավորման նպատակով բերենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 418-րդ հոդվածը, ըստ որի՝ «պարտապանի աշխատողների գործողությունները համարվում են պարտապանի գործողություններ»** և պարտապանը պատասխանատու է այդ գործողությունների համար, եթե դրանք հանգեցրել են պարտավորությունը չկատարելուն կամ ոչ պատշաճ կատարելուն:

Հանրային իրավունքի ճյուղերում պատասխանատվության օբյեկտիվ և օրինական կիրառման միակ հիմքն իրավախախտի կողմից միայն մեղավորությամբ կատարված գործողությունը կամ անգործությունն է, քանի որ պատասխանատվության կիրառման միակ հիմքը օրենքն է, որի պահանջները, եթե նախատեսված են կատեգորիկ, ապա նույնիսկ գույքային պարտավորություններում կողմերը սեփական ցանկությամբ չեն կարող փոփոխել:

Հետևաբար, անդրադառնալով ՀՀ ՎԻՎ օրենսգրքով ամրագրված «անձնական պատասխանատվության» սկզբունքի բովանդակությանը՝ որպես վարչական պատասխանատվության կիրառման հիմնարար սկզբունքի, հոդվածների բովանդակությունից պարզ երևում է, որ ֆիզիկական անձը ենթակա է վարչական պատասխանատվության միայն իր կատարած վարչական իրավախախտման համար:

Հարաբերելով և համադրելով հիշատակված հոդվածը (որպես վարչական պատասխանատվության կիրառման ելակետային սկզբունքի կիրառում) նույն օրենսգրքում ամրագրված «Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության» պահանջների և այն սուբյեկտների գործողությունների հետ, որոնք կարող են հիմք հանդիսանալ իրավաբանական անձին պատասխանատվության ենթարկելու հետ, նկատում ենք, որ ՎԻՎ օրենսգրքում ուղղակի խոսքը

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքի 123-րդ հոդվածի դիսպոզիցիան:

«իրավաբանական անձի աշխատող», «իրավաբանական անձի անունից» հանդես եկող անձ և վերջապես «մարմին» կենսաբանական հասկացությունների մասին է, որոնք վկայում են, որ խոսքը ոչ թե իրավաբանական անձի՝ որպես մարդկանց հավաքական, նույն նպատակների և խնդիրների իրականացման համար միավորված կազմակերպության պատասխանատվությունը կրողի, այլ այն անձանց մասին է, որոնց մեղքով կատարվել է իրավախախտումը: Համեմատելով հիշատակված ՎԻՎ օրենսգրքի նորմերի դիսպոզիցիաների շարադրանքը գործող քրեական օրենսգրքի 123-րդ հոդվածի 5-րդ մասի շարադրանքի հետ՝ համոզվում ենք, թե իրավագիտության ինչպիսի անտեղյակությամբ են նախապատրաստվել և ՀՀ ԱԺ կողմից հաստատվել «իրավաբանական անձին» քրեական պատասխանատվության ենթարկելու ընդհանուր պայմանները: Հոդվածի դիսպոզիցիայում ասվում է, որ ֆիզիկական անձին քրեական պատասխանատվության ենթարկելը չի բացառում նույն հանցագործության համար իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը: Իրավագիտության անտեղյակությունը հիմնավորելու համար հոդվածի շարունակությունում որպես հավելում ընդգծվել է, որ ֆիզիկական անձին քրեական պատասխանատվությունից ազատելը հիմք չէ իրավաբանական անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար: Պատահական չէ, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 57-րդ հոդվածում, որտեղ պարզորոշ շարադրված են իրավաբանական անձի մարմնի կարգավիճակի իրավական առանձնահատկությունները, երրորդ մասում հստակեցում սահմանելու նպատակով ուղղակիորեն ընդգծվել է. «անձը, որն օրենքով կամ իրավաբանական անձը կանոնադրության ուժով հանդես է գալիս նրա անունից, պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ (իրավաբանական անձը որպես մարդկանց միասնություն չի կարող ունենալ անհատական ողջամտություն)՝ ի շահ իր կողմից ներկայացվող իրավաբանական անձի: Նա պարտավոր է իրավաբանական անձի հիմնախնդիրների (մասնակիցների) պահանջով հատուցել իր կողմից իրավաբանական անձին պատճառած վնասները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով»:

Դժվար չէ նկատել, որ հիշատակված հոդվածում ամրագրված անձանց ներկայացվող պահանջները իրավունքի ճյուղերի օրենսդրությամբ պարզորոշ սահմանազատում են իրավաբանական անձանց՝ որպես մարդկանց միավորում-միասնական (ամբողջական) պատասխանատվության ենթարկելու անհնարինությունը:

Կարծում ենք՝ քաղաքացիական օրենսդրության մեջ նշված սկզբունքները, իրավաբանական անձանց պատասխանատվության հիմնախնդիրը կարգավորելու ժամանակ, արդարադատության մարմիններին հնարավորություն են ընձեռում գույքային պատասխանատվության ոլորտում կազմակերպության մեղքը դիտարկել որպես պատասխանատվության **սուբյեկտիվ կողմ**, քանի որ մեղքը իրավագիտության մեջ բնորոշվում է որպես հոգեկան վիճակ, իսկ իրավաբանական անձի մեղքը ձևավորել իրավաբանական անձի կամքը ձևավորող աշխատողների կողմից որպես հանրագումարային մեղք՝ հիմնավոր չէ: Կազմակերպության ցանկացած աշխատող կարող է իր բաժին մեղքն ունենալ

իրավաբանական անձի մեղքի ձևավորման գործում<sup>1</sup>:

Իրավաբանական անձանց պատասխանատվության հայեցակարգային դրույթները, մեր կարծիքով, թե՛ անցյալում և թե՛ այսօր ունեն մտացածին, արհեստական բնույթ և իրավունքի տարբեր ճյուղերում պատասխանատվության կիրառումն ընթանում է իրարամերժ սկզբունքներով և չափանիշներով, որոնք մեծ մասամբ ճիշտ չեն արտացոլում այն իրավական հիմքերը, որոնք իրավունքի և օրինականության պահանջ-սկզբունքների կիրառմամբ կարող են հիմնավորել և իրատեսական դարձնել ինչպես իրավաբանական անձանց, այնպես էլ՝ մարդկանց կենսաբանական միասնություն հանդիսացող և տարաբնույթ գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, հիմնարկների, ներկայացուցչությունների, մասնաճյուղերի, հիմնադրամների իրավաբանական պատասխանատվության հիմնախնդիրները:

Ի տարբերություն վերոնշյալ քրեական, քաղաքացիական և վարչական իրավունքի ճյուղերում իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելու սկզբունքների, ֆինանսական իրավունքում, հիմք ընդունելով հանրային ֆինանսների ոլորտի գերակա շահերը, պատասխանատվությունն իրականացվում է թե՛ սուբյեկտիվ և թե՛ օբյեկտիվ կողմերի մանրագնին հաշվառմամբ, հենվելով պետությանը հասցված վնասի և կորուստների ոչ թե մասնակի, այլ լրիվ վերականգնելու սկզբունքով, որը ելնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ հոդվածի այն պահանջից, որ իրավաբանական անձն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության գիտական հետազոտությունները հողվածում շարադրված են իրավունքի տարբեր ճյուղերի պատասխանատվության և հարկադրանքի կիրառման հիմնական օրինաչափությունների և առանձնահատկությունների համեմատական վերլուծությամբ, որտեղ ընդգծված են իրավաբանական անձանց ֆինանսաիրավական պատասխանատվության առանձնահատկությունների հիմնավորումները:

Հարկային օրենսդրության և հարկային ծառայության մարմինների կողմից իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող հարկադրանքի (պատասխանատվության) գործնական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ **հարկային իրավախախտումների մեծ մասը տեղի է ունենում հարկերից խուսափելու միջոցով, որը, մեր կարծիքով, իրավախախտման սուբյեկտիվ կողմի դրսևորման առանձնահատկություն է, երբ իրավախախտը գիտակցված անտեսում է իր գործողությունները գնահատելու անհրաժեշտությունը:**

Հարկային հարաբերություններն իրենց բնույթով ֆինանսական են: Դրանց նկատմամբ քաղաքացիական օրենսդրությունը և այլ իրավական (ոչ հարկային) ակտերը չեն կիրառվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ (ՀՀ քաղաքացիական օրենսգրք, հոդված 1, կետ 6): Այնուամենայնիվ, պատաս-

<sup>1</sup> Տե՛ս *Матвеев Г.К. Вина в советском праве. - Киев, 1955, էջ 291: Բարսեղյան Ս., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, 1-ին մաս: Եջվ. աշխ., էջ 495:*

խանասովության կիրառման հիմքերի առումով հետաքրքիր է զուգահեռ անցկացնել քրեական, վարչական, քաղաքացիական և հարկային օրենսդրության խախտումների միջև՝ ընդգծելով դրանց ընդհանրությունը և տարբերությունները: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին կետի՝ «Պարտավորության ուժով մի անձ (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել զույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլ, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Օրենսգրքի 408-րդ հոդվածը սահմանում է, որ պարտավորության խախտում է այն չկատարելը կամ անպատշաճ կատարելը:

Ըստ Քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի առաջին կետի՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար մեղքի առկայության դեպքում պատասխանատու է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

ՀՀ-ում հարկային իրավախախտումների համար պատասխանատվություն (հարկադրանք) կիրառվում է՝ ելնելով «Հարկային օրենսգրքի» 399-րդ հոդվածի դրույթներից, որտեղ ամրագրված է, որ հարկային օրենսդրության խախտումն առաջացնում է պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով: Հարկերը ճիշտ հաշվարկելու, ժամանակին վճարելու և հարկային օրենսդրության մյուս պահանջները պահպանելու պատասխանատվությունը, հարկային օրենսդրությամբ այլ բան սահմանված չլինելու դեպքում, կրում են հարկ վճարողները՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պաշտոնատար անձինք: Հարկային պարտավորությունը դադարում է դրա կատարման, հարկի վերացման, հարկից ազատելու արտոնության սահմանման, ինչպես նաև հարկային օրենսդրությամբ նախատեսված, իսկ ֆիզիկական անձի համար՝ նաև նրա մահվան դեպքերում, եթե օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ: ՀՀ հարկային օրենսդրությամբ նախատեսված (հարկադրանքի) միջոցները կիրառվում են ինչպես պարտավորությունների ոչ պատշաճ կատարման (օրինակ՝ հաշվարկները, հայտարարագրերը սահմանված ժամկետներից ուշ, սխալներով ներկայացնելը), այնպես էլ՝ որոշակի գործողություններ չկատարելու (օրինակ հաշվառում չվարելու) կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալու (օրինակ՝ դրոշմավորման ենթակա ապրանքները չդրոշմավորելը) համար: **Ֆինանսական հարկադրանքի միջոցների կիրառման համար, ի տարբերություն քաղաքացիական օրենսդրության, մեղքի առկայությունը նշանակություն չունի հարկային օրենսդրությունը խախտած անձին պատասխանատվության ենթարկելու համար:**

Հարկային օրենսդրությամբ իրավահարաբերության սուբյեկտի մեղքը հստակ նշված չլինելու պայմաններում ՀՀ հարկային իրավանորմերի կիրառումը ընթացել և ընթանում է այնպես, որ **Ֆինանսական հարկադրանքի կիրառման հիմքը, որպես կանոն, հարկային մարմնի պաշտոնատար անձի կողմից կազմված**

**ստուգման ակտն է՝** որտեղ արտացոլված է հարկային իրավախախտումը: Տարբեր երկրների ֆինանսական օրենսդրության, հատկապես հարկադրանքի կարգը սահմանող իրավական ակտերի ուսումնասիրություններից պարզ երևում է, որ այդ պետությունները, ելնելով անմեղության կանխավարկածի սկզբունքներից և միջազգային իրավական համագործակցության պահանջներից, իրենց օրենսդրություններում հստակեցրել են «պատասխանատվությունն ըստ մեղքի» սկզբունքը: ՌԴ հարկային օրենսգրքի 108-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ **հարկ վճարողը հարկային իրավախախտման առումով համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքը ապացուցված չէ դաշնային օրենքով սահմանված կարգով և հաստատված չէ օրինական ուժի մեջ մտած դատավճռով**<sup>2</sup>: Ինչպես վկայում են հարկային ծառայության մարմինների գործնական աշխատանքները, ՀՀ «Հարկային օրենսգրքով» սահմանված հարկային պատասխանատվության տեսակներն իրենց բնույթով այնպիսին են, որ դրանց կիրառումը գրեթե միշտ ենթադրում է ֆինանսական հարկադրանքի իրացում:

Ակնհայտ է, որ ֆինանսական իրավախախտումների համար հարկադրանքի կիրառման հիմքը պետության տնտեսական անվտանգության ապահովումն է: Այն, հանդես գալով որպես ֆինանսական օրենսդրության հիմնարար սկզբունք, կյանքի է կոչում ՀՀ «Հարկային օրենսգրքը»<sup>2</sup>, ՀՀ «Բյուջետային համակարգի մասին» օրենքը, վարչական և քրեական օրենսգրքերը, ֆինանսական իրավախախտումների դեպքերում ներգործության միջոցներ նախատեսող այլ իրավական ակտերը:

ՀՀ ֆինանսական, ինչպես նաև այլ օրենսդրության ճյուղերը ֆինանսական գործունեության իրավախախտումների դեպքերում նախատեսում են հարկադրանքի ուղղակի միջոցներ: Հատկապես բյուջետային և վարկային իրավախախտումների համար **պատասխանատվության միջոցներն ուղղակի կարելի է համարել՝** ելնելով այն իրականությունից, որ ՀՀ օրենսդրական և ենթաօրենսդրական այլ ակտերով ևս ֆինանսական իրավախախտումների համար անմիջական ներգործության անուղղակի եղանակներ նախատեսող ակտեր կան, որոնց պահանջները նույնպես պարտադիր են: ՀՀ ֆինանսական գործունեության ոլորտի իրավախախտումների կապակցությամբ կիրառվող իրավունքի այլ ճյուղերի հարկադրանքի (պատասխանատվության) միջոցների համապատասխան իրավական ինստիտուտների համեմատական վերլուծությունները և դրանց գործնական արդյունավետության գնահատումները կնպաստեն «իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության» հիմնախնդրի իրավագիտական բացահայտումների և իրավունքի տեսությունների, ինչպես նաև իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակահարմարության խնդիրների լուծմանը և օրենսդրական նոր

<sup>1</sup> Տե՛ս **Мороз В.В.** Пути повышения эффективности выездной налоговой проверки. «Финансы», N 8, 2007, էջ 36-39:

<sup>2</sup> Տե՛ս *Налоговый кодекс Российской Федерации (часть первая) от 31 июля 1998 г. N 146-ФЗ (в редакции Федерального закона от 4 ноября 2005 г. N137-ФЗ):*

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ «Հարկային օրենսգրքը», 343-րդ հոդվածի 3-16-րդ կետերը:

նախաձեռնություններն արդեն հղկված իրավագիտության հայեցակարգերի պահանջներին համահունչ դարձնելուն:

Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության և պատժի, հարկադրանքի միջոցների կիրառման համակարգը նույնպես զուրկ է իրավագիտական հիմնավորումներից: Հարկադրանքի միջոցների համակարգը մտացածին է, այն իրավունքի տարբեր ճյուղերի պատասխանատվության միջոցների մեխանիկական փոխառություններ են, որոնք գործածության մեծ վաղեմություն ունեն և բխում են համապատասխան իրավունքի ճյուղի կողմից կարգավորվող իրավախախտումների բնույթից և համահունչ են այլ իրավունքի ճյուղի կարգավորման առարկային և կարգավորման մեթոդին:

Քրեական իրավախախտումների համար կիրառվող հարկադրանքի միջոցները նպատակ ունեն ապահովել իրավախախտի նկատմամբ պատժի կիրառման անխուսափելիության սկզբունքը և գործնականում կիրառվում են տարբեր ոլորտների քրեաիրավական կարգավորումն ապահովող առանձին իրավական ակտերով, որոնց մի մասը դեռևս պատշաճ կարգով համակարգված չէ:

Քրեական պատասխանատվությունն այլ իրավունքի ճյուղերից սահմանազատման հիմնական չափանիշն այսօր պայմանավորված է հասարակական հարաբերությունների տարբեր ոլորտներում կիրառվող հարկադրանքի միջոցների տեսակներով, որոնք կոնկրետ դրսևորվում են իրավախախտումների կարգավորմանն ուղղված սանկցիաներով:

Իրավաբանական անձանց նկատմամբ քրեական հարկադրանքի միջոցների տեսակների առանձնահատկությունները բացահայտելու նպատակով անհրաժեշտ ենք համարում իրավական-համեմատական մեթոդների օգնությամբ մատչելի դարձնել «պատասխանատվության», «հարկադրանքի» և դրանց միջոցների սահմանազատման հիմքերի իրավական հայեցակարգերի ելակետային դրույթները:

Համեմատության կարգով ընդգծենք, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությամբ լուսաբանված չեն քրեաիրավական պատասխանատվություն, պատասխանատվության միջոցների հիմնահարցերը, որոնց բովանդակությունը թե՛ Քրեական օրենսգրքում և թե՛ ուսումնական դասագրքերում հանգեցվում է «պատիժ» հասկացությանը:

Մայրենի լեզվով հրատարակված քրեական իրավունքի (դասագիրք բուհերի համար) ընդհանուր մասում հեղինակներն այն տեսակետն են հայտնում, որ քրեականը իրավական պատասխանատվության առավել խիստ տեսակն է, որը սահմանվում է հանցագործության համար: Հանցանքի կատարումը ենթադրում է մեղավորի ոչ միայն քրեական պատասխանատվություն, այլև նրա բարոյական դատապարտում: Ընդհանուր առմամբ, քրեական պատասխանատվությունը կարելի է բնորոշել որպես անբարենպաստ հետևանքներ, որոնք առաջ են գալիս հանցագործության մեջ մեղավոր անձի համար<sup>1</sup>: Այնուհետև, ուսումնական դասագրքի հեղինակները, անդրադառնալով «քրեական պատժի հասկացության

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ քրեական իրավունք (ընդհանուր մաս): Եր., ԵՊՀ, 2003, էջ 235-240:

և տարրերի» լուսաբանմանը, ընդգծում են, որ «պատիժը» քրեական պատասխանատվության ձևերից է<sup>2</sup>: Վերջինիս տեսական զարգացումների արդյունքում հանգում են այն եզրակացության, որ **պատիժը պետական հարկադրանքի միջոց է**, որի հիմնավորման համար վկայակոչում են ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածը, որտեղ սահմանված է. **պատիժը պետական հարկադրանքի միջոց է**, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին<sup>3</sup> իրավունքներից ու ազատություններից օրենքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ<sup>4</sup>:

Գրեթե հավասարության նշան դնելով «պատիժ», «պատասխանատվություն», «հարկադրանք» եզրույթների միջև՝ նույնացվել են հիշատակված հասկացությունները, որի հետևանքով գործող Քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածում սահմանվում է 10 պատժատեսակ, որոնք, ըստ էության, ոչ թե «տեսակ» են, այլ «պատժամիջոցներ»:

Կարծում ենք՝ քրեական այս պատժամիջոցները նույնպես անհրաժեշտ է դասակարգել ա) նյութական, բ) անձնական և գ) բարոյական պատասխանատվության տեսակների և յուրաքանչյուրը սահմանազատել ըստ պատասխանատվության առարկայի: Այս հանգամանքի հիմնավորումը հիշատակված ուսումնական դասագրքում ընդգծում են հեղինակները՝ քրեական պատասխանատվություն համարելով մեղավոր ճանաչված անձին իրավունքներից և ազատությունից զրկումը, դրանց սահմանափակումները, ինչպես նաև բարոյական ներգործության միջոցներով կիրառվող պատասխանատվությունը:

Քրեաիրավական պատասխանատվության և պատժամիջոցների հստակեցման նպատակով ընդգծենք, որ, օրինակ, «կալանքը», «ազատագրկումը որոշակի ժամկետով» կամ «ցմահ ազատագրկումը» անձնական իրավունքների սահմանափակման պատասխանատվության միջոցներ են, իսկ «տուգանքը», «գույքի բռնագրավումը»՝ նյութական պատասխանատվության միջոցներ: Ինչ վերաբերում է բարոյական պատասխանատվության միջոցներին, ապա վերջինիս օրինակ կարելի է համարել «հանրային աշխատանքների դատապարտման դատավճիռը»<sup>1</sup>:

Հիմնախնդրի բացահայտումից չհեռանալու նպատակով անդրադառնանք նաև պետության ֆինանսական գործունեության ոլորտները կարգավորող նորմատիվ իրավական ակտերում ամրագրված հարկադրանքի միջոցների տեսակներին, լուսաբանենք դրանցից յուրաքանչյուրի իրավական առանձնահատկությունները:

Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան մի շարք երկրների ֆինանսական օրենսդրության վերլուծությունների հիման վրա կարող ենք ասել, որ

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 369:

<sup>3</sup> Ծանուցում: Այն եզրույթում հեղինակները նկատի ունեն ֆիզիկական անձանց:

<sup>4</sup> Տե՛ս ՀՀ քրեական իրավունք (ընդհանուր մաս), էջ 370:

<sup>1</sup> Տե՛ս **Սուքիասյան Ն.Գ.**, Ֆինանսական հարկադրանքի միջոցների դասակարգումը: ՀՀ սահմանադրական դատարան, «Տեղեկագիր», 2(102), Եր., 2021, էջ 21-31:

Ֆինանսական հարկադրանքի միջոցները ներկայացվում են հետևյալ համակարգով.

1. տուգանք,
2. տույժեր,
3. բյուջետային ֆինանսավորման դադարեցում,
4. իրավախախտի բանկային հաշիվներից դրամական միջոցների դուրս գրում,
5. բյուջետային վարկավորման դադարեցում,
6. ֆինանսական օգնության կարգով տրվող փոխհատուցման, դոտացիայի, սուբսիդիայի և սուբվենցիայի գումարների դադարեցում,
7. բյուջետային վարկավորման և փոխատվությունների դադարեցում,
8. ֆինանսական շուկաներում գործունեության առանձին տեսակների համար տրվող արտոնագրերի դադարեցում,
9. ֆինանսապլանային ակտերի կատարման մասին հաշվետվությունները մերժելը և այլ միջոցներ<sup>2</sup>:

**Ֆինանսական տուգանքը դրամական բնույթի ֆինանսական տույժ է**, որը կիրառվում է ֆինանսական խախտում կատարողի նկատմամբ՝ օրենքով նախատեսված դեպքերում և չափերով:

Ֆինանսական կարգով տուգանք նախատեսող նորմեր սահմանում են միայն ՀՀ պետական իշխանության ու կառավարման բարձրագույն մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Այսօր ֆինանսական տուգանքը քաղաքացիների կամ պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվում է միայն այն դեպքում, երբ անարդյունավետ են լինում կարգապահական ներգործության միջոցները:

Ինչպես հայտնի է, տուգանքը կիրառվում է նաև որպես քրեական պատժամիջոց (պետական հարկադրանք – սանկցիա): Չխոսելով դրանց իրավական հետևանքների և կիրառման հիմքերի տարբերությունների մասին՝ նկատենք, որ ի տարբերություն ֆինանսական տուգանքի, որը գլխավորապես կիրառվում է որպես տույժի հիմնական միջոց, քրեական տուգանքը կարող է հանդիսանալ և՛ որպես հիմնական պատիժ, և՛ որպես լրացուցիչ պատիժ:

Տուգանքը ֆինանսական տույժերի ամենատարածված և ընդ որում բավականաչափ արդյունավետ տեսակներից մեկն է, որի դրական կողմը հենց այդ տույժի նյութական բնույթն է: Ֆինանսական տուգանքը՝ ի տարբերություն քրեական և վարչական կարգով նշանակվող տուգանքների, նպատակ չունի դաստիարակչական անհրաժեշտ ներգործություն ունենալ իրավախախտողի վրա: Հետևաբար, ֆինանսական տուգանքի նպատակը հասցված վնասի վերականգնումն է, որն արտահայտված է ֆինանսական սանկցիաներում և ամեն

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ «Բյուջետային համակարգի մասին», ՀՀ «Կենտրոնական բանկի մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին», ՀՀ «Արժեթղթերի շուկայի մասին», ՀՀ «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին», ՀՀ «Հարկերի մասին» ՀՀ օրենքները, ինչպես նաև «Бюджетный кодекс РФ», часть 4. - М., 2008, էջ 281-306:

ՍԱՀՄԱՆԱՂՈՐԾՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 4(121)2025

գործադրման ընթացքում արտահայտում է ֆինանսաիրավական սանկցիաների վերականգնողական բնույթը, մինչդեռ **թե՛ վարչական և թե՛ քրեական իրավախախտումների համար կիրառվող տուգանքներն ունեն պատժողական և դատաիրակչական բնույթ և զուրկ են իրավախախտման համար վճարվող միանվագ վարձ լինելուց:**

Գործնականում տուգանքն իրականացվում է և՛ վարչական, և՛ քրեական, և թե՛ ֆինանսական օրենսդրությամբ սահմանված կարգով<sup>1</sup>:

Վարչական, քրեական և ֆինանսաիրավական կարգով իրականացվող տուգանքների միջև գլխավոր տարբերությունն այն է, որ առաջին դեպքում այն հիմնականում նշանակվում է վարչական մարմնի կողմի՝ վարչական զանցանքի համար, իսկ երկրորդ դեպքում դատարանի կողմից՝ հանցագործության համար: Մինչդեռ ֆինանսական տուգանքն այսօր ՀՀ ֆինանսական օրենսդրությամբ հստակեցված է. այն թե՛ ֆիզիկական և թե՛ իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվում է ըստ պետության ֆինանսական համակարգի առանձին օղակների կարգավորման առանձնահատկությունների՝ հիմք ընդունելով պետության կենտրոնացված և տեղական ինքնակառավարման (համայնքների) դրամական ֆոնդերի ձևավորման գործընթացում թույլ տրված ֆինանսական իրավախախտումները:

Ֆինանսական տուգանքը՝ որպես դրամական տույժ, կիրառում է լիազորված մարմինը կամ նրա ներկայացուցիչը միայն հանրապետության **բարձրագույն օրենսդիր մարմնի կողմից ընդունված ակտերում նախատեսված դեպքերում և սահմաններում, որտեղ ուղղակի ընդգրկված են ֆինանսական տուգանքները և այլ հարկադրանքի միջոցներ կիրառող մարմինները, սահմանված է վերջիններիս լիազորությունների շրջանակը:** Այսպիսի կատեգորիկ պահանջների հանդիպում ենք ՀՀ «Բյուջետային համակարգի մասին», ՀՀ «Արժույթի կարգավորման և արժույթի վերահսկողության մասին», ՀՀ «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքներում, ինչպես նաև ՀՀ «Հարկային օրենսգրք»-ում:

Առավել հստակ ընդգծումներ ենք հանդիպում օրինակ, ՌԴ «Բյուջետային օրենսգրքի» 284 և 284<sup>1</sup>-րդ հոդվածներում, որտեղ կոնկրետացված են ոչ միայն տուգանք կիրառող սուբյեկտները, այլև դրանց լիազորությունները ըստ ֆինանսական իրավախախտման բնույթի<sup>1</sup>:

Ֆինանսական տուգանքի կարևոր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ այն կիրառվում է ոչ միայն քաղաքացիների ու պաշտոնատար անձանց, այլ հիմնականում կազմակերպությունների, հիմնարկների (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ) նկատմամբ՝ անկախ վերջիններիս իրավական կարգավիճակից:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ օրենքը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին»՝ ընդունված 2004 թ. փետրվարի 18-ին, 82-րդ հոդված: **Դանիելյան Գ.**, Վարչական պատասխանատվություն: Եր., «Լույս» հրատ., 2002, էջ 108: Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքների վերաբերյալ, «Հարդ ընդ Սոֆի» հրատ., Եր., 2007, էջ 159:

<sup>1</sup> Տե՛ս Бюджетный кодекс Российской Федерации. - М.: Проспект, 2008:

Համեմատական կարգով նկատենք, որ ՀՀ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» գործող օրենսգիրքը չնայած հստակ սահմանում է իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու հիմքերը, այնուամենայնիվ, գործնականում **երբեմն կազմակերպությունների նկատմամբ կիրառում է վարչական տուգանք, որն ըստ էության հակասում է նույն օրենսգրքի 22-րդ հոդվածի պահանջներին, ըստ որի վարչական տույժի նպատակը վարչական իրավախախտում կատարած անձի դաստիարակումն է օրենքները պահպանելու, համակեցության կանոնները հարգելու ոգով:** Մի հանգամանք, որ բացառում է կազմակերպությունների նկատմամբ վարչական տույժեր կիրառելու հնարավորությունը<sup>1</sup>:

Ի տարբերություն քրեական, վարչական տուգանքի, ֆինանսական տուգանքը կիրառվում է կազմակերպության դրամական ֆոնդերի, դրանց բյուջետային և արտաբյուջետային միջոցների նկատմամբ: Դրանք ֆինանսական իրավախախտման օբյեկտներ են և ենթարկվում են հանրային հարկադրման՝ անկախ պաշտոնատար անձանց մեղքից: Ֆինանսական տուգանքները մուտքագրվում են համապատասխան մակարդակի բյուջեներ կամ արտաբյուջետային ֆոնդեր:

**Ֆինանսահրավական հարկադրանքի միջոցների համակարգում յուրահատուկ բովանդակություն ունի տույժը:** Կարծում ենք, տույժի՝ որպես պատասխանատվության միջոցի, գաղափարը ծնունդ է առել քաղաքացիական իրավունքում, որպես գույքային պարտավորությունների կատարումն ապահովող միջոց և այսօր իր գանձման չափերի մեծությամբ աչքի է ընկնում հատկապես պետության ֆինանսական համակարգի կարգավորմանն ուղղված իրավական ակտերի սանկցիաներում: Նկատենք, որ տուգանքը և տույժը սահմանված են նաև քաղաքացիական օրենսդրությամբ:

ՀՀ գործող «Քաղաքացիական օրենսգրքի» 369-րդ հոդվածում տուգանքը (տուգանք, տույժ) համարվում է օրենքով կամ պայմանագրով որոշված այն դրամական գումարը, որը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում՝ ներառյալ կատարման կետանցի դեպքում:

Տուգանքը գույքային հարաբերություններում կարող է սահմանվել ինչպես օրենքով, այնպես էլ՝ կողմերի համաձայնությամբ՝ պայմանագրով:

Հետևաբար, քաղաքացիական իրավունքում տուգանքը դասակարգվում է երկու իրավական հիմքով՝ ա) օրենսդրական և բ) պայմանագրային:

«Քաղաքացիական օրենսգրքի» 371-րդ հոդվածի բովանդակությունից պարզ երևում է, որ տուգանքը կիրառվում է պարտավորական իրավահարաբերությունների մասնակիցների կամքից անկախ, այսինքն՝ անկախ այն բանից՝ կողմերի համաձայնությամբ նախատեսված է տուգանք վճարելու պարտավորություն, թե ոչ:

<sup>1</sup> Տե՛ս **Мосин Е.Ф.** Административная ответственность за правонарушения в сфере бизнеса. - Санкт-Петербург, 1998, էջ 41:

Ինչ վերաբերում է պայմանագրային տուգանքի իրավական բովանդակությանը, ապա այն նախատեսված է կողմերի համաձայնությամբ:

Համեմատության համար, անդրադառնալով ֆինանսական իրավանորմերի սանկցիաներում ամրագրված «տուգանք» հասկացությանը, նկատենք, որ վերջինս առաջին անգամ իրավաբանորեն հստակեցված ամրագրվել է ՀՀ «Հարկերի մասին» օրենքի 23-րդ հոդվածում, որտեղ պարզորոշ ասված էր, որ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը (հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալը) **վճարում է տույժ ժամանակին** չմուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով: Գործող ՀՀ «Հարկային օրենսգիրքը», ի տարբերություն նախորդի, նվազեցրել է տույժը, այն սահմանելով ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0.075 տոկոսի չափով:

Նշված չափերով օրական տույժերը կիրառվում են, եթե հարկային օրենսդրությամբ ավելի նվազ չափ սահմանված չէ:

Վերոհիշյալ տույժը կիրառվում է ժամանակին չմուծված հարկի գումարների (այդ թվում՝ նաև հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում հարկային գործակալի կողմից չվճարված), հարկերի կանխավճարային մուծումների գումարների, ստուգման արդյունքներով հայտնաբերված (պակաս ցույց տրված) հարկվող օբյեկտի գծով հարկի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետանց ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի քան 365 օրվա համար:

Համեմատելով ֆինանսաիրավական հարկադրանքի միջոցներն այս համակարգի մեջ մտնող հարկադրանքի առանձին տեսակները արտասահմանյան երկրների նույնանման սանկցիաների ձևերի հետ՝ դժվար չէ նկատել, որ իրավական տեխնիկայի իմաստով որքան պարզ և մատչելի են շարադրված համապատասխան սանկցիաները ֆինանսական օրենսդրության համակարգի իրավական ակտերում: Օրինակ, ՌԴ «Հարկային օրենսգրքի» 75-րդ հոդվածում ասված է, որ **տույժը դրամական գումար է**, որը հարկատուն կամ հարկային գործակալը պարտավոր է վճարել այն դեպքերում, երբ հարկերը կամ գանձույթները սահմանված ժամկետներում չի վճարել:

Տույժի, որպես ֆինանսաիրավական հարկադրանքի միջոցի, գործառնական նշանակությունն արտահայտվում է այնքանով, որ վերջինս, որպես կանոն, կիրառվում է այն դեպքերում, երբ պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող հարկերը կամ գանձույթները ժամանակին չեն վճարվում: Այլ խոսքով, ֆինանսական օրենսդրությամբ ամրագրված տույժը հանդես է գալիս պետական և տեղական բյուջեների սահմանված ժամկետներում չմուծված հարկերի և գանձույթների փոխհատուցման միջոց, որը, որպես կանոն, գանձվում է հարկատեսակից և հարկ վճարող գործակալներից և իրավաբանական անձանցից:

Անդրադառնալով տույժի՝ որպես ֆինանսական հարկադրանքի միջոցի բնութագրերին՝ նկատենք, որ այս հարցում ֆինանսաիրավական գրականության մեջ մեկ միասնական կարծիք չկա: Հեղինակների մի մասն այն տեսակետին է, որ

Ֆինանսական տույժն ըստ էության լրացուցիչ վճար է, որը չի կարելի համարել ֆինանսաիրավական պատասխանատվության միջոց<sup>1</sup>:

Կարծում ենք՝ պետք է համաձայնել այն իրավագետների հետ, որոնք ֆինանսական տույժը դասում են ֆինանսաիրավական վերականգնողական հարկադրանքի միջոցների շարքին, որոնց նպատակը պետության ֆինանսական գործունեության տարբեր ոլորտներում կատարված ֆինանսական իրավախախտումների հետևանքով հասցված վնասի վերականգնումն է, որն, ըստ էության, իրականացվում է միայն պետական հարկադրանքի կիրառմամբ<sup>2</sup>:

Գործնականում տույժ կիրառվում է քաղաքացիաիրավական և ֆինանսաիրավական հարաբերությունների մասնակիցների խախտված իրավունքների պաշտպանության նպատակով, ուստի, նկատենք որ վերջիններս միմյանցից խիստ տարբեր են: Այսպես.

ա) Տույժ սահմանող ֆինանսաիրավական սանկցիաները, որպես կանոն, չեն կարող սահմանվել իրավահարաբերությունների **կողմերի համաձայնությամբ**:

Այն գումարները, որոնք գանձվում են որպես տույժ, մուտքագրվում են պետական կամ համայնքների բյուջեներ:

բ) Էսպես տարբեր են նաև ֆինանսական իրավախախտման դեպքում տույժը գանձող մարմինները: Ֆինանսական օրենսդրությամբ ամրագրված է, որ ֆինանսական խախտումների դեպքում կազմակերպություններից տույժերը անվիճելի կարգով կարող են գանձել միայն լիազորված պետական մարմինները:

Ինչ վերաբերում է տույժերի գանձման քաղաքացիաիրավական կարգին, ապա որպես կանոն այն գանձում են միայն դատարանները:

Համեմատության կարգով նկատենք, որ ՀՀ ֆինանսական օրենսդրությամբ սահմանված է տույժերի գանձման պարզեցված կարգ, որի լուսաբանումները բերված են ՀՀ Հարկային օրենսգրքի 400-րդ հոդվածի 3-րդ մասում և 401-րդ հոդվածում: Այլ է վիճակը օրինակ ՌԴ-ում: Այսպես, ՌԴ «Հարկային» և «Բյուջետային» օրենսգրքերում տույժերի հաշվարկման բարձր տոկոսադրույքներ են սահմանված: Երկու դեպքերում էլ ժամկետներում չմուծված հարկային եկամուտների ամեն ուշացած օրվա համար սահմանված է տույժ՝ չմուծված գումարի 1:300-ի չափով<sup>3</sup>:

Ֆինանսաիրավական հարկադրանքի միջոց է **բյուջետային ֆինանսավորման դադարեցումը**: Որպես ֆինանսաիրավական սանկցիա, հարկադրանքի այս միջոցը գործնականում կիրառվում է ֆինանսական իրավախախտում կատարած այն կազմակերպությունների նկատմամբ, որոնք հանդես են գալիս բյուջետային վարկերի գլխավոր կամ երկրորդական տնօրինողներ և նրանց անունով առևտրային բանկերում բացված են ընթացիկ հաշիվներ:

<sup>1</sup> Տե՛ս *Финансовое право / Под ред. Куляшханова И.Ш., Эриашвили Н.Д. - 2-ое издание. - М.: Закон и право, 2007, էջ 463-464:*

<sup>2</sup> Տե՛ս *Корсаева М.В. Финансовое право (общая часть). - М.: ЮРИСТ, 2000, էջ 191:*

<sup>3</sup> Տե՛ս, *НК РФ, էջ 75, БК РФ, էջ 290, 291, 305:*

Բանկային մարմիններում կազմակերպությունների գործառնությունների դադարեցման իրավունքով օժտված են միայն օրենքով նման լիազորություններով օժտված այն մարմինները, որոնք ստեղծվել են բյուջետային գործընթացների վերահսկողության համար: Մեր հանրապետությունում այդպիսի մարմիններ են ՀՀ ֆինանսների նախարարությունը, ինչպես նաև ՀՀ գանձապետական ծառայությունը և դրանց տեղական մարմինները:

Ֆինանսաիրավական հարկադրանքի միջոց է հանդիսանում **բյուջետային միջոցների բռնագանձումը**: Հարկադրանքի այս միջոցն ունի իրավավերականգնողական, ինչպես նաև նախազգուշական բնույթ: Այս սանկցիայի նպատակը ֆինանսական իրավախախտում կատարած սուբյեկտի տիրապետման տակ գտնվող բյուջետային միջոցների այն մասի բռնագանձումն է, որը հետագայում նույնպես կարող է ենթարկվել անօրինական վատնման:

ՀՀ քրեական օրենսգրքում իրավաբանական անձի քրեական պատասխանատվության ընդհանուր պայմաններում որպես քրեաիրավական ներգործության միջոցներ են՝ գործունեության որոշակի տեսակով զբաղվելու ժամանակավորապես դադարեցումը, հարկադիր լուծարումը, ՀՀ տարածքում գործունեություն իրականացնելու արգելքը, որոնք իրենց նպատակներով, խնդիրներով ամրագրված են նաև վարչական, քաղաքացիական, ֆինանսական իրավունքի ճյուղերի օրենսդրությամբ, ունեն իրենց ոլորտներին ներհատուկ իրավական կարգավորումներ և մեծ հաշվով հիմք են հանդիսացել իրավունքի ճյուղերի և վերջիններիս իրավաբանական պատասխանատվության սահմանազատումների համար: Օրինակ, գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցման գաղափարը փոխ է առնված ՎԻՎ օրենսգրքի «վարչական տույժեր» ինստիտուտի «հատուկ իրավունքներից զրկելու» ներգործության միջոցից (վարորդական իրավունքից որոշակի ժամկետով զրկելը), և այլ փոխառություններ, որոնք չեն բխում քրեական իրավունքի և օրենսդրության էությունից:

Հավելենք, որ «Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը» սահմանող քրեաիրավական նորմերը, որոնք ամրագրված են ՀՀ «Քրեական օրենսգրքում, դեռևս գործնականում կիրառման ուղեգիր չեն ստացել, որի մասին է վկայում քննչական կոմիտեի «տնտեսական հանցագործությունների» բաժնի քննչական պրակտիկան: Այլ խոսքով՝ այլ պետությունների քրեական օրենսդրությունից կատարված «Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության» իրավական ինստիտուտի փոխառությունները, ըստ էության, մեր հանրապետության քրեական օրենսդրության վերափոխումների, բարելավումների, կատարելագործման իմաստով հասունացած չեն, ժամանակավրեպ են, որի օրենսդրական ամրագրումները վկայում են, որ քրեական իրավունքի գիտությունը այսօր մատնված է անտարբերության, գիտական հետազոտություններ և բացահայտումներ չկան, իսկ ԱԺ համապատասխան մասնագետների բացակայության պատճառով կյանքի ուղեգիր է տալիս մեծաթիվ օրենսդրական նախաձեռնությունների, որոնք ի

սկզբանե հիվանդությունների պատճառով հասարակական կեցության պահանջներից չեն բխում, մահացած են ծնվում:

## ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ ПРИВЛЕЧЕНИЯ ЮРИДИЧЕСКОГО ЛИЦА К УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ

### Аннотация

Проблемы юридической ответственности по сей день продолжают оставаться в центре внимания учёных-юристов.

Современное развитие общественных отношений делает императивом дня необходимость исследования и научной разработки отраслевой ответственности в праве, целью которой является регулирование правонарушений, возникающих в различных сферах общественных отношений.

Выявлению проблем правонарушений в различных сферах карательной политики государства, государственного принуждения, ответственности и наказания посвящены научные исследования авторов, методологическим источником которых являются разработанные в юридической науке концептуальные положения общей юридической ответственности отраслей частного и публичного права. Сравнительно-правовые исследования этих положений позволяют разграничить уголовную ответственность юридических лиц от традиционных видов юридической ответственности по тем особенностям, правовое регулирование которых направлено на оценку качеств деятельности субъектов современных производственно-экономических отношений.

На основе анализа юридической литературы, посвящённой юридической ответственности, авторы приходят к выводу, что ответственность юридического лица представляет собой самостоятельный вид юридической ответственности, основные особенности разграничения которого обусловлены исключительно выявлением уголовно-правовых нарушений, совершаемых в процессах сбора, распределения и перераспределения денежных средств в производственно-экономической сфере государства, в сфере производства материальных благ, и их классификацией в соответствии с отдельными сферами финансовой деятельности государства.

Авторы статьи, исходя из принципов эффективности юридической ответственности и оставаясь верными методологическим приёмам юридической ответственности, подчёркивают, что в отличие от уголовной,

административной, дисциплинарной ответственности, финансово-правовая ответственность, поскольку она выражается в санкции финансово-правовой нормы, по сути является правоотношением, защита которого предусмотрена законом, а в случае нарушения применяется государственное принуждение в формах финансово-правового воздействия.

В статье развивается мысль о том, что правовым основанием ответственности юридического лица является финансовое правонарушение, которое отражает публично-правовой характер финансового обязательства, нарушенного вследствие правонарушения. Это позволяет разграничить финансово-правовую ответственность от других форм юридической ответственности и признать преимущества практического применения финансово-правовой ответственности юридического лица как доказательство его самостоятельного существования.

Руководствуясь особенностями финансово-правовой ответственности, в статье обосновывается, что для данного вида ответственности характерно исключительно полное восстановление причинённого государству ущерба.

Авторы в соответствии с особенностями методологии формирования финансовой ответственности анализируют юридическое лицо как субъекта указанной ответственности, виды правонарушений и на основе правовых обоснований подчёркивают необходимость самостоятельного использования и применения финансово-правовой ответственности в качестве правовой гарантии проводимых в Республике Армения экономических, финансовых, налоговых, валютных реформ.

**Ключевые слова:** принуждение, ответственность, юридическая ответственность, штраф, пеня, восстановительное производство, вид наказания, мера наказания.

## LEGAL ISSUES OF SUBJECTING LEGAL ENTITIES TO CRIMINAL LIABILITY

### Annotation

The fundamental issues of legal liability continue to remain at the center of attention for legal scholars even today.

The modern developments in social relations make it an imperative of the day to research and scientifically develop branch-specific liability in law, aimed at regulating violations that occur in different spheres of social relations.

The authors' scientific research is devoted to identifying violations in various areas of the state's punitive policy system, state coercion, liability, and punishment issues. The methodological source of the research is based on the conceptual provisions of general legal liability developed over time in the field of jurisprudence for the branches of private and public law. The comparative legal studies of those provisions make it possible to distinguish the criminal liability of legal entities from the traditional types of legal liability based on specific features of legal regulations, which are aimed at assessing the qualities of the activities of subjects in production-economic relations of the time.

Based on the analysis of legal literature devoted to legal liability, the authors conclude that the liability of a legal entity is an independent type of legal liability, the main distinguishing features of which are exclusively conditioned by the identification of criminal law violations occurring in the processes of collecting, distributing, and redistributing monetary funds in the state's production-economic and material goods production spheres, as well as their classification according to certain areas of the state's financial activity.

Proceeding from the principles of the effectiveness of legal liability and remaining faithful to the methodological techniques of legal liability, the authors emphasize that, unlike criminal, administrative, and disciplinary types of liability (since financial-legal liability is expressed in the sanction of a financial-legal norm), it is essentially a legal relationship protected by law, and in case of violation, state coercion is applied in the forms of financial-legal influence.

The article develops the idea that the legal basis for the liability of a legal entity is a financial violation, which expresses the public-legal nature of the infringed financial obligation as a result of the violation, making it possible to distinguish financial-legal liability from other forms of legal liability and to recognize the advantages of the practical application of the financial-legal liability of a legal entity as evidence of its independent existence.

Guided by the specific features of financial-legal liability, the article substantiates that this type of liability has an exclusively restorative nature for the damage caused to the State.

Through the methodological features of the formation of financial liability, the authors analyze that the legal entity is a subject of the aforementioned liability, and, with legal justifications, emphasize the types of violations, and the necessity of the independent application and use of financial-legal liability as a legal guarantee for the economic, financial, tax, and currency reforms implemented in the Republic of Armenia.

**Keywords:** coercion, liability, legal liability, fine, penalty, restorative proceedings, type of punishment, punitive measure.

*Հոդվածը հանձնված է խմբագրություն 02.12.2025 թ., փրվել է գրախոսության 03.12.2025 թ., ընդունվել է տպագրության 15.12.2025 թ.:*